ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 01/2025/Վ/Վ

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 12 մայիսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Սլավիկ Սարգսյանի նկատմամբ 2025 թվականի փետրվարի 10-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 01/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 3-ին Հանձնաժողով մուտքագրված՝ Աստղիկ Ռուբենի Բալասանյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում), 2025 թվականի փետրվարի 10-ին կայացրել է Վարքագծի

կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու և դիմումը մասնակի մերժելու մասին թիվ 01/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ՝ Հարուցման որոշում):

1.2. Հարուցման որոշմամբ Տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանի նկատմամբ վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթ է հարուցվել Դիմումով նշված հետևյալ տեղեկատվության հիման վրա՝

1.2.1. Ըստ Դիմումի՝ Տեսչական մարմնի ղեկավար Ս.Սարգսյանի կողմից 20 օրվա ընթացքում արձակվել է 4 հրաման՝ դիմողի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու վերաբերյալ, որոնցից 3-ը՝ 2024 թվականի օգոստոսի 20-ին, իսկ 4-րդը՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ին: Նշված 4 ծառայողական քննություններից 2-ը հարուցվել են «Նաիրի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ում իրականացված 1 վարույթի արդյունքում, մեկը՝ վերադասության կարգով բողոքի շրջանակներում վարչական ակտի մի մասով գործը նոր քննության ուղարկելու արդյունքում, իսկ վերջինը՝ ստուգում իրականացրած աշխատանքային խմբի կողմից ստուգաթերթի մեկ հարցի պատասխանը ճիշտ չձևավորելու պատճառով:

Ըստ Դիմումի՝ վերադասությամբ կամ վարչական դատարանում վարչական ակտերի բողոքարկման արդյունքում Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց կողմից ընդունված վարչական շատ ակտեր են բեկանվել և ուղարկվել նոր քննության, արձանագրվել են շատ դեպքեր, երբ ստուգաթերթերի պատասխաններն աշխատանքային խմբի կողմից ճիշտ չեն ձևավորվել, սակայն Տեսչական մարմնի ղեկավարի կողմից միայն արևելյան տարածքային կենտրոնի պետն է ներգրավվել ծառայողական քննությունների գործընթացում: Դիմողը նշել է, որ իր նկատմամբ ցուցաբերվել է խտրական, անհարգալից և ոչ օբյեկտիվ վերաբերմունք:

1.2.2. Դիմումի համաձայն՝ Ա.Բալասանյանի կողմից ղեկավարված տարածքային կենտրոնի հաստիքացուցակով հաստատված է վարորդի հաստիք, որը, սակայն, սպասարկում է Տեսչական մարմնի ղեկավարին: Ըստ դիմողի՝ Տեսչական մարմնի ղեկավարն իրեն արգելել է օգտվել ծառայողական մեքենայից:

1.3. Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 01/724-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկել է Սլավիկ Սարգսյանին: Նշված գրությունը Սլավիկ Սարգսյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 21-ին (հիմք՝ ALO126606221AM փոստային անդորրագիր):

1.4. Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 01/722-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկել է Աստղիկ Բալասանյանին: Նշված գրությունը Աստղիկ Բալասանյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 20-ին (հիմք՝ ALO126653290AM փոստային անդորրագիր):

1.5. 2025 թվականի մարտի 12-ին Հանձնաժողովում է մուտքագրվել Սլավիկ Սարգսյանի դիրքորոշումը:

1.6. 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողով է մուտքագրվել Աստղիկ Բալասանյանի գրությունը, որով նա ներկայացրել է Դիմումով նկարագրված դեպքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ:

1.8. Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/1552-2025 գրությամբ Տեսչական մարմնից պահանջել է ներկայացնել վարույթի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որը ներկայացվել է 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրությամբ:

1.9. Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/1548-2025 գրությամբ Աստղիկ Բալասանյանից պահանջել է ներկայացնել վարույթի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որը ներկայացվել է Աստղիկ Բալասանյանի՝ Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 25-ին մուտքագրված գրությամբ:

1.10. Հանձնաժողովը 2025 թվականի մայիսի 6-ի թիվ 01/1903-2025 գրությամբ Տեսչական մարմնից պահանջել է ներկայացնել վարույթի իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն, որը ներկայացվել է Տեսչական մարմնի 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությամբ:

1.11. Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցը 2025 թվականի մայիսի 8-ին հեռախոսազրույց է ունեցել Տեսչական մարմնի վարորդներ Արշավիր Զաքարյանի, Արայիկ Պողոսյանի, Արայիկ Աստվածատրյանի, Ալեքսան Գրիգորյանի, Կարեն Գևորգյանի, Տիգրան Վերմիշյանի, Վահագն Սարգսյանի և Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի պետ-տեսուչ Պարույր Կուռոյանի հետ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի մարտի 12-ին Հանձնաժողով մուտքագրված գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Սլավիկ Սարգսյանը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում) առ այն, որ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը սահմանում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի իրավունքը նշանակելու ծառայողական քննություն և ծառայողական քննություն վարողի եզրակացության հիման վրա կիրառելու կարգապահական տույժ՝ պահպանելով կատարված արարքի և կիրառվող տույժի համաչափությունը:

Դիրքորոշման համաձայն՝ 2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնում ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցների նկատմամբ՝ իրենց ծառայողական պարտականությունները չկատարելը և (կամ) ոչ պատշաճ կատարելը պարզելու նպատակով Ս.Սարգսյանը նշանակել է 12 ծառայողական քննություն, որոնց արդյունքում ներկայացված եզրակացությունների հիման վրա կայացրել է համապատասխան որոշումներ, այդպիսով իրացնելով իր՝ որպես հանրային ծառայողի, պարտավորությունը՝ գործելու իրավունքի գերակայության սկզբունքին, օրենքի ոգուն և տառին համապատասխան:

Դիրքորոշմամբ նշվել է, որ նշանակված ծառայողական քննությունները հավաստում են, որ Տեսչական մարմնում միայն Աստղիկ Բալասանյանի նկատմամբ չէ, որ նշանակվել է ծառայողական քննություն և կիրառվել կարգապահական տույժ: Ծառայողական քննություն նշանակելիս և ստացված եզրակացության հիման վրա կարգապահական տույժի ենթարկելիս յուրաքանչյուր դեպքում հաշվի են առնվել կատարված արարքի բնույթը, պարբերականությունը, ծառայողական քննության արդյունքում ի հայտ եկած սխալները և կատարված արարքի հետևանքները: Ըստ այդմ, այն չի կարող համարվել խտրական վերաբերմունք Աստղիկ Բալասանյանի նկատմամբ:

Դիրքորոշմամբ վկայակոչվել են խտրականության հասկացությունը ներառող միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներ, մասնավորապես՝ «Մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածը, թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդվածը:

Դիրքորոշմամբ անդրադարձ է կատարվել նաև խտրականության արգելքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, մասնավորապես, Դիրքորոշմամբ նշվել է, որ Ֆաբրիսն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2013 թվականի փետրվարի 7-ի, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի, Բուրդենն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2008 թվականի ապրիլի 29-ի վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արձանագրումներին՝ կապված տարբերակված վերաբերմունքը օբյեկտիվ և ողջամիտ արդարացում ունենալու պարագայում խտրական վերաբերմունք չդիտարկելու հետ:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Տեսչական մարմնում չկա հարուցված ծառայողական առնվազն երկու քննություն, որոնք իրենց բնույթով, փաստական հանգամանքներով կամ հետևանքներով լինեն նույնաբովանդակ:

Դիրքորոշմամբ վկայակոչվել է ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում:

Դիրքորոշման համաձայն՝ Աստղիկ Բալասանյանի նկատմամբ կիրառված կարգապահական տույժերի համաչափությունն ու օրինականությունն այժմ քննվում են դատական կարգով:

Սույն եզրակացության 1.2.2 կետով նկարագրված առերևույթ խախտման առնչությամբ Դիրքորոշմամբ վկայակոչվել է Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 01-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված՝ հանրային ռեսուրսի հասկացությունը:

Դիրքորոշման համաձայն՝ հանրային ծառայության բարեվարքությունը ենթադրում է հանրային ռեսուրսների արդյունավետ ու բարեխիղճ օգտագործում: Հանրային ծառայողը պարտավոր է իր գործունեության համար տրամադրված

հանրային ռեսուրսները և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Տեսչական մարմնին հատկացված ծառայողական ավտոմեքենաները նախատեսված են սպասարկելու աշխատակիցների կողմից գործուղումների իրականացումը, այդ թվում՝ տարածքային կենտրոնի պետի գործուղումը ծառայողական նպատակով, ինչն ապահովված է եղել Աստղիկ Բալասանյանի համար:

Վերջինս, ըստ Դիրքորոշման, գործուղումներ իրականացրել է քաղաք Աբովյանից դեպի քաղաք Երևան, ու քաղաք Աբովյանից դեպի քաղաք Գավառ, և հակառակը: Նշված գործուղումներն Աստղիկ Բալասանյանն իրականացրել է բացառապես ծառայողական ավտոմեքենաներով՝ գրեթե բոլոր դեպքերում ստանալով գործուղման համար նախատեսված օրապահիկ, և բացառված էր նրա կողմից սեփական միջոցների հաշվին որևէ գործուղման իրականացումը: Նույնիսկ այն դեպքում, երբ Արևելյան տարածքային կենտրոնին կցված ծառայողական ավտոմեքենաները իրականացնում էին աշխատակիցների գործուղումները, Աստղիկ Բալասանյանին տրամադրվում էր կենտրոնական ապարատին կցված ծառայողական ավտոմեքենաներից մեկը՝ վարորդով:

Դիրքորոշմամբ նշվել է, որ ինչ վերաբերում է Տարածքային կենտրոնի պետի կողմից ծառայողական ավտոմեքենայից օգտվելու «օրինական» իրավունքից արգելելուն, ապա Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության մեջ չկա որևէ իրավակարգավորում, որը կսահմաներ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումն անձնական նպատակով:

Դիրքորոշման համաձայն՝ Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի հաստիքացուցակում առկա վարորդի հաստիքի առնչությամբ նշվել է, որ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2020 թվականի մայիսի 20-ի N ԱԿ 505-Լ հրամանի N 1 հավելվածով սահմանված է Տեսչական մարմնի հաստիքացուցակը, ըստ որի՝ նախատեսված է վարորդի ութ հաստիք, իսկ մինչ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 92-Ա որոշումը Տեսչական մարմնին կցված էր 19 ծառայողական

ավտոմեքենա, որոնք բաշխված էին կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ ըստ անհրաժեշտության:

Ըստ Դիրքորոշման՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վարորդների համար նախատեսված հաստիքները քիչ են՝ ի տարբերություն ծառայողական մեքենաների քանակի, դրանք կցվում էին վարորդական իրավունք ունեցող և բարեխիղճ ու պատասխանատու վարքագիծ դրսևորած աշխատակիցներին, իսկ վարորդները ըստ անհրաժեշտության վարում էին այն կառուցվածքային ստորաբաժանմանը կցված ծառայողական մեքենաները, որտեղ վարորդական իրավունք ունեցող աշխատակիցներ չկային, կամ չէին կարող կցվել, և որոնց հետ կնքվում էր լիակատար պատասխանատվության մասին պայմանագիր:

Դիրքորոշման համաձայն՝ Տեսչական մարմնին կցված ծառայողական ավտոմեքենաները սպասարկում են տարածքին՝ դրանք համարվում են գործառնական ավտոմեքենաներ, այսինքն՝ նախատեսված են Տեսչական մարմնի օրենսդրությամբ նախատեսված գործառույթների արդյունավետ և օպերատիվ իրականացումն ապահովելու համար:

Ըստ այդմ, ըստ Դիրքորոշման, բացառված է Աստղիկ Բալասանյանի նկատմամբ խտրական վերաբերմունքը, և նրա ծառայողական ավտոմեքենայից անձնական նպատակով օգտվելու «օրինական» իրավունքից արգելելը:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Ս.Սարգսյանը՝ որպես Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ, 2022 թվականին երեք ամսով համակարգել է նաև Արևելյան տարածքային կենտրոնը և այդ ժամանակահատվածում ոչ մի անգամ չի օգտվել ծառայողական ավտոմեքենաներից տնից աշխատավայր կամ աշխատավայրից տուն գնալու համար:

Բացի այդ, ըստ Դիրքորոշման, Ս.Սարգսյանի համակարգման ժամանակ Արևելյան տարածքային կենտրոնին կցագրված երկու ծառայողական ավտոմեքենաներն աշխատանքային օրվա ավարտին կայանվել են Արևելյան տարածքային կենտրոնի տարածքում: Մինչ Աստղիկ Բալասանյանի՝ Արևելյան տարածքային կենտրոնի պետ նշանակվելը և դրանից հետո, այդ թվում՝ մինչ այսօր, չի փոխվել ոչ Արևելյան տարածքային կենտրոնին կցված ծառայողական ավտոմեքենաների քանակը, և ոչ էլ հատկացված վառելիքը:

Դիրքորոշմամբ վկայակոչվել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-766 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ պաշտոնատար անձինք գործունեություն ծավալելիս պարտավոր են խստորեն գործելու Սահմանադրությամբ կամ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, հակառակ պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի խախտում, ինչից որևէ բացառություն որևէ պետական մարմնի համար Սահմանադրությամբ նախատեսված չէ:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Աստղիկ Բալասանյանի ծառայողական ավտոմեքենայից անձնական նպատակով օգտվելու «օրինական» իրավունքն ամրագրված չէ որևէ իրավական ակտով, որը Ս.Սարգսյանը կարող էր արգելել՝ խախտելով Սահմանադրության 6-րդ հոդվածը:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ ներկայումս Ս.Սարգսյանի կողմից նշանակվել է երկու ծառայողական քննություն, որոնց քննության կողմ են ներգրավվել հինգ ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակից: Վերջիններիս կարգապահական տույժի ենթարկելու հարցը կորոշվի ծառայողական քննության ավարտին՝ վարողի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1. ՀՀ վարչապետի՝ 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 837-Ա որոշման համաձայն՝ Սլավիկ Սարգսյանը նշանակվել է Տեսչական մարմնի ղեկավար:

3.2. Աստղիկ Բալասանյանի՝ 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված գրության ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված գրությամբ Ա.Բալասանյանը նշել է, որ Հարուցման որոշմամբ անդրադարձ է կատարվել Դիմումի առարկայի ոչ բոլոր հարցերին, Դիմումի առարկան ճիշտ չի ձևակերպվել, և վարույթի հարուցումը մերժելու դեպքերն օրենսդրությամբ հստակ չեն հիմնավորվել:

3.2.1. Գրությամբ Հարուցման որոշման 1.3 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Հարուցման որոշման 3.1 կետի՝ Հանձնաժողովի եզրակացությունն առ այն, որ

ամսական պարբերականությամբ աշխատողների պարգևատրման ընթացակարգը և պայմանները նախատեսված չեն որևէ իրավական ակտով, և դրանք կատարվում են հայեցողական կերպով, չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջին, այն է՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

3.2.2. Գրությամբ Հարուցման որոշման 1.4 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Դիմումի 3-րդ կետով նկարագրված վարքագծով Տեսչական մարմնի ղեկավարը նսեմացրել է Ա.Բալասանյանին և արժևորել իրեն ու Երևան քաղաքի տարածքային կենտրոնի պետին, ինչպես նաև վիրավորել է Ա.Բալասանյանի արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրության 3-րդ, 23-րդ և 29-րդ հոդվածների և Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն <u>որոշման հավելվածով</u> սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 15-րդ, 17-րդ, 36-րդ, 37-րդ, 51-րդ և 56-րդ կետերի վկայակոչմամբ Ա.Բալասանյանը նշել է, որ Դիմումով նշված հանգամանքները համադրելով նշված իրավակարգավորումների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հետ, կարելի է եզրակացնել, որ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումներ են կատարվել:

3.2.3. Գրությամբ Հարուցման որոշման 1.5 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ

Հարուցման որոշմամբ Հանձնաժողովի արձանագրումն առ այն, որ նշված դեպքի առնչությամբ առկա չէ վարույթ հարուցելու հիմք, անհասկանալի է, քանի որ թեև ստուգումն իրականացնում են աշխատողները, սակայն Տեսչական մարմնի ղեկավարը փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով համաձայնեցրել և հաստատել է օրինականության սկզբունքի խախտմամբ իրականացվող ստուգումների գործընթացում առկա հակաօրինական հետևողական վարքագիծը:

3.2.4. Գրությամբ Հարուցման որոշման 1.6 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Աննա Մկրտումյանն Ա.Բալասանյանի հասցեին հնչեցրել է նրա անձն ու մասնագիտական հմտությունները վիրավորող արտահայտություններ, որոնք կարելի է ստուգել միայն Ա.Բալասանյանի զեկուցագիրը, համապատասխան ձայնագրությունը Տեսչական մարմնից ստանալու և ծանոթանալու, լսումներ կազմակերպելու միջոցով, հակառակ դեպքում՝ Ա.Բալասանյանն ինչ էլ գրի, կկոչվի սուբյեկտիվ տեղեկատվություն:

3.2.5. Գրությամբ Հարուցման որոշման 1.7 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Հարուցման որոշման 1.7-րդ և 3.5-րդ կետերով անդրադարձ չի կատարվել Տեսչական մարմնի ղեկավարի կողմից խախտված աշխատանքի իրավունքին:

3.2.6. Գրությամբ Հարուցման որոշման 1.8 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Հարուցման որոշմամբ Հանձնաժողովի կողմից անդրադարձ չի կատարվել Տեսչական մարմնի ղեկավարի կողմից հանրային ռեսուրսի և այլ գույքի խնայողաբար օգտագործմանը: Ըստ գրության՝ նշված պարագայում հանրային ռեսուրսների և այլ գույքի ոչ խնայողաբար օգտագործելը համարվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի, Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանված՝ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների 74-րդ կետի պահանջների խախտում:

3.2.7. Գրությամբ Հարուցման որոշման 1.9 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Հանձնաժողովը Հարուցման որոշման 1.9-րդ կետում խնդրի առարկան ճիշտ չձևակերպելու, 3.7-րդ կետում այն օրենսդրությամբ սահմանված

իրավակարգավորումների հետ ճիշտ չհամադրելու և այն ոչ ճիշտ վերլուծելու արդյունքում հանգել է ոչ ճիշտ մեկնաբանության վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայության մասին:

3.2.8. Գրությամբ Հարուցման որոշման 1.10 կետով նկարագրված դեպքի վերաբերյալ, ի հավելումն Դիմումով ներկայացված տեղեկատվության, նշվել է, որ Հարուցման որոշման 3.8-րդ կետում նշված եզրահանգումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Մասնավորապես, Հարուցման որոշման 3.8-րդ կետում անդրադարձ չկա «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, որի համաձայն՝ այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը:

3.2.9. Գրությամբ նշվել է, որ Հարուցման որոշման մեջ բացակայում է անդրադարձը տեսչական մարմնում առկա խնդիրների վերաբերյալ https://t.me/VardanGukasyan/19521 հղումով խիստ մտահոգիչ, կոռուպցիոն բնույթի տեղեկատվության հետագա ընթացքն ապահովելու վերաբերյալ:

3.2.10. Գրությամբ Ա.Բալասանյանը պահանջել է գրությունն ընդունել որպես վերադասությամբ ներկայացված բողոք՝ Հանձնաժողովի կողմից վարչական ակտ ընդունելու ընթացքում թույլ տված խախտումները վերացնելու և նոր վարչական ակտ ընդունելու պահանջով կամ Տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալ Աննա Մկրտումյանի վրա նոր կարգապահական վարույթ հարուցելով կամ գրության ընթացքն ապահովել Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված իրավական այլ ընթացակարգով:

3.3. Աստղիկ Բալասանյանի՝ Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 25-ին մուտքագրված գրության ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանձնաժողովի հարցմանն ի պատասխան՝ Ա.Բալասանյանը հայտնել է հետևյալը.

3.3.1. Տեսչական մարմնի ղեկավարի կողմից Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառված կարգապահական երեք տույժերը բողոքարկվել են դատական կարգով և գտնվում են դատաքննության փուլում:

3.3.2. Հանձնաժողովի հարցին առ այն՝ արդյոք Տեսչական մարմնում որպես տարածքային կենտրոնի ղեկավար պաշտոնավարման ընթացքում Ա.Բալասանյանին գործուղումներ իրականացնելու նպատակով բոլոր դեպքերում տրամադրվել են ծառայողական ավտոմեքենա և վարորդ՝ Ա.Բալասանյանը նշել է.

«(...) արևելյան տարածքային կենտրոնին պետության կողմից ավտոմեքենա և վարորդի հաստիք տրամադրվել է տարածքային կենտրոնի աշխատանքներն արդյունավետ և ժամանակին կազմակերպելու նպատակով: Վարորդի հաստիքի առկայության, սակայն, փաստացի, Տեսչական մարմնի ղեկավարին ծառայելու պատճառով, տարածքային կենտրոնի ավտոմեքենայի վարորդի պարտականությունները, իր անմիջական պարտականությունների հետ համատեղ, իրականացվել են Տարածքային կենտրոնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի մասնագետ Նորիկ Սարգսյանի կողմից, որն անհարմարություններ է ստեղծել աշխատանքներն արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ընթացքում, քանի որ Տարածքային կենտրոնի աշխատանքները պետք է համաձայնեցվեին Նորիկ Սարգսյանի պաշտոնական պարտականություններով պայմանավորված ծանրաբեռնվածության հետ: Նշված խնդիրը կարգավորելու համար մի քանի ամիս տարածքային կենտրոնի տնտեսվար Արթուր Ամիրխանյանի ավտոմեքենան էլ է օգտագործվել տարածքային կենտրոնի աշխատանքները կազմակերպելու համար՝ նախապես համաձայնեցնելով Տեսչական մարմնի ղեկավարի հետ, որի կողմից նրան վճարել է և ծախսված վառելիքի գինը, և համապատասխան պարգևավճարը: Իսկ տարածքային կենտրոնի Գավառի բաժին իմ գործուղումներն իրականացվել են և տարածքային կենտրոնի ավտոմեքենայով, և Տեսչական մարմնի այլ ավտոմեքենայով:»:

3.3.3. Գրությամբ նշվել է, որ Տեսչական մարմնի կողմից Ա.Բալասանյանի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառվել այն հիմքով, որ նրա կողմից ընդունված վարչական ակտը հետագայում փոփոխվել է, և վարչական ակտի մի մասով գործն ուղարկվել է նոր քննության: Ըստ գրության՝ Տեսչական մարմինը միատեսակ մոտեցում չի ցուցաբերել Տեսչական մարմնի այլ աշխատողների (նաև ղեկավարի)

կողմից կայացված վարչական ակտերը փոփոխելու և վարչական ակտի մի մասով գործը նոր քննության ուղարկելու մյուս դեպքերում, այդ ակտերը կայացրած աշխատողների (նաև ղեկավարի) նկատմամբ այդ հիմքով կարգապահական տույժեր չեն կիրառվել: Գրությամբ նշվել է, որ Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակված հաշվետվությունների համաձայն՝

2021 թվականին Տեսչական մարմնի դեմ դատական կարգով բերված բողոքների առթիվ կայացվել է 48 վճիռ, որից 36-ը՝ հօգուտ բողոքաբերի (75%),

2022 թվականին Տեսչական մարմնի դեմ վերադասությամբ բերված 123 բողոքից 41-ը բավարարվել է, դատական կարգով բերված բողոքների առթիվ կայացվել է 148 վճիռ, որից 107-ը՝ հօգուտ բողոքաբերի (72.3%),

2023 թվականին Տեսչական մարմնի դեմ վերադասությամբ բերված 183 բողոքից 43-ը բավարարվել է, իսկ դատական կարգով բերված բողոքների առթիվ կայացվել է 224 վճիռ, որից 143-ը՝ հօգուտ բողոքաբերի:

2024 թվականին Տեսչական մարմնի դեմ վերադասությամբ բերված 205 բողոքից բավարարվել է 57-ը, իսկ դատական կարգով բերված բողոքների առթիվ կայացվել է 362 վճիռ, որից 237-ը՝ հօգուտ բողոքաբերի:

Գրությամբ նշվել է, որ վերոգրյալ բազմաթիվ վարչական ակտերի բեկանվելու կամ փոփոխվելու դեպքում Տեսչական մարմինը միայն Ա.Բալասանյանի նկատմամբ է կիրառել կարգապահական տույժ, այլ դեպքերի մասին Տեսչական մարմնի կողմից տեղեկատվություն Ա.Բալասանյանին չի տրամադրվել՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Տեսչական մարմին, ՀՀ վարչապետին դիմելու պարագայում:

3.3.4. Գրությանը կից ներկայացվել են Աստղիկ Բալասանյանի՝ Տեսչական մարմնին և ՀՀ վարչապետին հասցեագրված դիմումները և դրանց պատասխանները: Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ 2025 թվականի փետրվարի 25-ի թիվ 04/3816-2025 գրությամբ նշվել է, որ 2020-2025 թվականներին Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից կայացված վարչական ակտերից վերադասության կարգով վերացվել կամ անվավեր են ճանաչվել 191 վարչական ակտ, իսկ դատական կարգով՝ 538 վարչական ակտ: Նույն գրության համաձայն՝ 2020-2025 թվականների ընթացքում Տեսչական մարմնում իրականացվել է 120 ծառայողական քննություն, սակայն դրանց հիմքերի մասով հաշվառում չի կատարվել:

3.4. Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 28-ին մուտքագրված՝ Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրության և դրան կից ներկայացված նյութերի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.4.1. Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ԱԿ 967-Ա հրամանով նշանակվել է ծառայողական քննություն՝ Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի պետ-տեսուչ Պ.Կուռոյանի և բժիշկ հիգիենիստ Մ.Գրիգորյանի բացատրագրում նշված հանգամանքները ուսումնասիրելու և պարզելու նպատակով: Ծառայողական քննության շրջանակներում, որպես պարզաբանման ենթակա հարց, սահմանվել է հետևյալ հարցը. «Արդյո՞ք Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 10-ի թիվ 24040217 ստուգման հանձնարարագրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշմամբ հաստատված թիվ 1.22 ստուգաթերթով նախատեսված 10-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հարցերին պատասխանելիս ամբողջական և բազմակողմանի հետազոտվել են ձեռք բերված և ուսումնասիրված փաստաթղթերը (ապացույցները):»: Որպես ծառայողական քննության կողմ ներգրավվել են Ա.Բալասանյանը և Պ.Կուռոյանը:

Ծառայողական քննության արդյունքների մասին 2024 թվականի հոկտեմբերի 14-ի եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«(...) Իրականացված ստուգման արդյունքում Ստուգաթերթի 10-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հարցերի դիմաց նշվել է «Այո» պատասխանը, որի համաձայն ստացվում է, որ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հեպատիտ Բ-ի, Ց-ի, ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով ստացիոնար բուժման դիմող անձանց և բուժաշխատողների լաբորատոր հետազոտություններ հեպատիտ Բ-ի նկատմամբ՝ սահմանված ժամկետում և բուժանձնակազմի և պացիենտի արյան լաբորատոր հետազոտություններ հեպատիտ Ց-ի դրոշմների նկատմամբ, (...) սակայն վերոնշյալ ձեռք բերված ապացույցներով չեն հիմնավորվում, որ ՊՈԱԿ-ում համապատասխան հետազոտությունները, թե հեպատիտ Բ-ի և թե հեպատիտ Ց-ի վերաբերյալ պատշաճ են իրականացվել:

(...)

Ներքին կարգապահական կանոնների 38-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Տեսչական մարմնի աշխատողը պարտավոր է ժամանակին ու ճշգրտորեն կատարել

օրենքների, Տեսչական մարմնի գործավարության կարգի, Տեսչական մարմնի ղեկավարի հրամանների, Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների հանձնարարականների, իր պաշտոնի անձնագրի, Ներքին կանոնների և այլ իրավական ակտերի պահանջները:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Տեսչական մարմնի աշխատողը պարտավոր է ժամանակին ու ճշգրտորեն կատարել իր անմիջական ղեկավարի՝ սահմանված կարգով, իր լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

(...) Հանձնարարագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Աստղիկ Բալասանյանին Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրվել է հստակ հանձնարարական՝ Հանձնարարագրի կատարման հսկողությունն իրականացնելու վերաբերյալ, որը ենթակա է եղել կատարման, սակայն հաշվի առնելով ներկայացված բացատրությունները, ուսումնասիրելով ստուգման գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ Աստղիկ Բալասանյանը հանդիսանալով Հանձնարարագրի կատարման հսկողությունն իրականացնող անձ, իր կողմից որևէ գործողություն չի իրականացրել Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ստացված հանձնարարականի շրջանակներում, մասնավորապես՝ Պատասխանատուի և ստուգումն իրականացնող այլ անձանց վրա դրված պարտականությունների, գործողությունների պատշաճ կատարման հսկողության մասով, որով խախտել է Ներքին կարգապահական կանոնների 38-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

(...) հարկ է արձանագրել, որ ոչ պատշաճ ստուգման արդյունքում կարող են լինել այնպիսի բուժաշխատողներ, որոնք հնարավոր է վարակված լինեն վիրուսային հեպատիտ Բ-ով կամ Ց-ով, որի ենթադրյալ առկայության պայմաններում վտանգվում է ՊՈԱԿ-ում գտնվող և բուժաշխատողների, և պացիենտների առողջությունը:

(...)

Վերջին մեկ տարվա ընթացքում՝ 03.10.2024 թվականի թիվ ԱԿ-1071-Ա հրամանով Աստղիկ Բալասանյանը ենթարկվել է «նկատողություն», իսկ 07.10.2024 թվականի թիվ 1090-Ա հրամանով ենթարկվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժերի (...):

Վերջին մեկ տարվա ընթացքում Պարույր Կուռոյանը չի ենթարկվել կարգապահական տույժերի:»:

Ծառայողական քննության արդյունքում Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԱԿ 1125-Ա հրամանով Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել է «ծառայության դադարեցում» կարգապահական տույժը: Պարույր Կուռոյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԱԿ 1127-Ա հրամանով կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Նույն արարքի համար կարգապահական պատասխանատվության է ենթարկվել նաև Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի բժիշկ հիգիենիստ Մուշեղ Գրիգորյանը, ում նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԱԿ 1129-Ա հրամանով կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

3.4.2. Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 881-Ա հրամանով նշանակվել է ծառայողական քննություն՝ Տեսչական մարմնում 2024 թվականի ապրիլի 18-ին հարուցված թիվ 180424-540 վարչական վարույթի արդյունքում 2024 թվականի հունիսի 13-ին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0958 որոշման իրավաչափությունը պարզելու նպատակով: Որպես ծառայողական քննության կողմ ներգրավվել են Ա.Բալասանյանը, Տեսչական մարմնի արևելյան կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի պետ-տեսուչի պարտականությունները կատարող Նելլի Աբրահամյանը, նույն կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի ավագ տեսուչ Բելլա Մայիլյանը:

Ծառայողական քննության արդյունքների մասին 2024 թվականի հոկտեմբերի 2-ի եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«(...) պարզվել է, որ (...) գեղեցկության սրահում իրականացվում է բժշկական օգնության և սպասարկման կոսմետոլոգիական տեսակը՝ (...) առանց ՀՀ առողջապահության նախարարության կողմից (...) արտահիվանդանոցային կոսմետոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար տրամադրված լիցենզիայի առկայության (...):

Անհրաժեշտ է փաստել, որ բժշկական օգնության և սպասարկման տեսակն առանց լիցենզիայի իրականացնելու համար՝ որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել, վարչական պատասխանատվություն է նախատեսված

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169-րդ հոդվածով, որի կիրառումը վերապահված է հարկային մարմնին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է պատասխանատվություն շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր չունեցող անձին կամ առաջին անգամ մասնագիտական գործունեության հավաստագիր չունեցող անձին մասնագիտական գործունեություն իրականացնել թույլատրելու համար:

Վերոնշյալը, ի թիվս այլ խախտումների հետ, ներառվել է 2024 թվականի հունիսի 4-ի թիվ 0978 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ, որի համար նշվել է, որ պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.9-րդ հոդվածի 1-ին մասով: (...)

Արդյունքում պարզ է դառնում, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ ներառվել է այնպիսի խախտում, որի նկատմամբ վերահսկողությունն օրենքով դրված չէ Տեսչական մարմնի վրա, (...):

Այնուհետև, Արևելյան տարածքային կենտրոնի պետ Աստղիկ Բալասանյանի կողմից 2024 թվականի հունիսի 13-ին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0958 որոշումը, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ ներառված խնդրահարույց կետը ամբողջովին փոփոխված տարբերակով է նշված, մասնավորապես խմբագրվել է հետևյալ կերպ. «գեղեցկության սրահում միջին բուժաշխատող(ի) (...) կողմից իրականացվում է բժշկական օգնության և սպասարկման կոսմետոլոգիական տեսակը (...) առանց շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայության, (...):

(...) Տվյալ պարագայում, երբ արձանագրվել է, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները մատուցվում են առանց համապատասխան լիցենզիայի և կրթության, խոսք չէր կարող գնալ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայության կամ բացակայության մասին: (բուժաշխատողը), թեկուզև, ունենար համապատասխան շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր, իրավունք չուներ զբաղվելու տվյալ գործունեությամբ:

Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 19-ի N 1910-Ա հրամանի հավելված 2-ով հաստատված կարգի 1-ին կետի համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիման վրա ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի կազմակերպման համար պատասխանատու են հանդիսանում Տեսչական մարմնի տարածքային կենտրոնի պետը և բաժնի պետը:

(...)

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ բողոքարկման վարույթի շրջանակներում Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի պետ Աստղիկ Բալասանյանի կողմից 2024 թվականի հունիսի 13-ին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0958 որոշումը բեկանվել է և ուղարկվել է նոր քննության:

Վերջին մեկ տարվա ընթացքում Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի պետ Աստղիկ Բալասանյանը և նույն տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի պետ-տեսուչի պարտականությունները կատարող Նելլի Աբրահամյանը, նույն բաժնի ավագ տեսուչ Բելլա Մայիլյանը կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել:»:

Ծառայողական քննության արդյունքում Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԱԿ 1071-Ա հրամանով Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Նելլի Աբրահամյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԱԿ 1079-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Բելլա Մայիլյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԱԿ 1080-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

Նույն արարքի համար կարգապահական պատասխանատվության է ենթարկվել նաև Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի մասնագետ Աիդա Ֆահրադյանը, ում նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԱԿ 1081-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

3.4.3. Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 882-Ա հրամանով նշանակվել է ծառայողական քննություն, որի շրջանակներում, որպես պարզաբանման ենթակա հարց, սահմանվել է հետևյալ հարցը՝ Տեսչական մարմնում

2024 թվականի մարտի 28-ին հարուցված թիվ Վ/Դ-162 վարչական վարույթի շրջանակներում արևելյան տարածքային կենտրոնի պետ Աստղիկ Բալասանյանի կողմից՝ վարչական վարույթի ընթացքում վարչական վարույթի մասնակցի կատարած ծախսերի փոխհատուցման վերաբերյալ գործողություններն իրավաչափ են, թե՞ ոչ: Որպես ծառայողական քննության կողմ ներգրավվել են Ա.Բալասանյանը, Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը, նույն վարչության իրավական աջակցության բաժնի գլխավոր իրավաբան Սյուզաննա Կիրակոսյանը:

Ծառայողական քննության արդյունքների մասին 2024 թվականի հոկտեմբերի 2-ի եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«(...) Հարուցված վարչական վարույթի շրջանակներում Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի պետի կողմից (...) Ընկերությունից պահանջվել է տրամադրել (...) «Նեղ մասնագետների գրառումների գրանցամատյան»-ի (այսուհետ՝ Գրանցամատյան) բոլոր էջերը (...)

Ընկերության կողմից (...) Տեսչական մարմին է հասցեագրվել գրություն, որտեղ նշվել է, որ պահանջվող գրանցամատյանները ծավալային են, իսկ կազմակերպության միջոցները՝ սուղ, ուստի խնդրել է հայտնել պատրաստակամություն՝ ծախսերի փոխհատուցման մասով:

Նշվածին ի պատասխան Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի պետի կողմից (...) ուղարկվել է պատասխան, որով առաջարկվել է Ընկերությանը հաշվել գրանցամատյանների լուսապատճենահանման ծախսերի չափը՝ տրամադրելով Ընկերության հաշվի համարը, որի վրա կփոխանցվի հաշվարկված ծախսի չափը՝ (...)»:

Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ ԱԿ 1070-Ա հրամանով ծառայողական քննության արդյունքներն ընդունվել են ի գիտություն, ծառայողական քննության կողմերի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:

3.4.4. Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 883-Ա հրամանով նշանակվել է ծառայողական քննություն Տեսչական մարմնում 2024 թվականի մարտի 28-ին հարուցված թիվ Վ/Դ-162 վարչական վարույթի արդյունքում 2024 թվականի հուլիսի 4-ին ««Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն առաջադրանք տալու մասին» թիվ 0280 կարգադրագրի իրավաչափությունը պարզելու նպատակով: Որպես ծառայողական քննության կողմ

ներգրավվել են Ա.Բալասանյանը, Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության բաժնի ավագ տեսուչներ Գրիշա Ղուկասյանը և Արմինե Զաքարյանը:

Ծառայողական քննության արդյունքների մասին 2024 թվականի հոկտեմբերի 3-ի եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

« (...) Սույն գործի շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի հունիսի 4-ի թիվ 01/12229-2024 գրությամբ Պետական եկամուտների կոմիտեի նախագահից պահանջվել է տեղեկատվություն՝ (...):

Տեսչական մարմինը վերոգրյալ տեղեկատվության ստացման համար 2024 թվականի հունիսի 4-ին կայացրել է որոշում՝ վարչական վարույթը երկարաձգելու մասին, սակայն ակտը կայացնելիս Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2024 թվականի հունիսի 11-ին տրամադրված տեղեկատվության հիման վրա չի իրականացվել եզրահանգում, հիմնավորված չէ, թե ինչ փաստի հաստատմանն էր ուղղված նման տեղեկատվության ձեռքբերումը, ինչպես նաև չի հիմնավորել տվյալ ապացույցների կապը վարույթի հետ: (...)

Վերոնշյալով խախտվել է (...) վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը:

(...) անհասկանալի է, թե ինչի հիման վրա է վարույթն իրականացնող պաշտոնատար անձը հանգել այն եզրակացության, որ դիմումատուն ենթակա է վճարման ֆյլուորոգրաֆիկ հետազոտությունների ավարտված դեպքերի համար 10%-ի չափով հավելավճար այն դեպքում, երբ նա Ընկերության տնօրենի (...) հրամանի համաձայն՝ լիազորված է իրականացնելու ռենտգենաբանական բժշկական օգնություն և սպասարկում, (...):

Վարչական վարույթի ընթացքում իրականացված լսումների, ինչպես նաև իրականացված զննման մասով ներկայացված բացատրություններից պարզ է դառնում, որ 2-րդ լսումն իրականացնելու անհրաժեշտությունը բացակայել է, քանի որ 1-ին լսման, ինչպես նաև իրականացված զննման ժամանակ, ընկերության լիազորված անձինք, լսման ժամանակ նաև դիմումատուն, ներկա են եղել, հնարավորություն ունեցել են ներկայացնելու դիրքորոշումներ, որոնք նաև ներկայացվել են, այնուամենայնիվ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը գտել է երկրորդ լսում նշանակելու անհրաժեշտությունը, սակայն ներկայացված բացատրությամբ չի հիմնավորվել դրա

անհրաժեշտությունը, այլ բավարարվել են նշելով այն, որ վարչական մարմինը լսումներ իրականացնելու ընթացքում կաշկանդված չէ լսումներ նշանակելու և իրականացնելու հարցում:

Վերոնշյալով խախտվել է (...) վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը:

Բացի այդ, անհասկանալի են վարչական մարմնի կողմից կատարված հետևությունները կատարված հաշվարկի (...) մասով, (...)

(...) Կարգադրագրի եզրափակիչ մասով նախատեսված է տուժանք, սակայն Կարգադրագրի նկարագրական և պատճառաբանական մասերում անդրադարձ չկա տուժանքը հաշվարկելու հիմք հանդիսացած խախտման փաստին, (...)

(...) (բուժաշխատողի անուն ազգանունը) կողմից աշխատանքի կատարման հանգամանքը հաստատված համարելու համար դիտարկվել են պայմանագիրը, հրամանը, գրանցամատյանները, վճարումները, սակայն ոչ՝ համապատասխան կրթության առկայությունը, նման ապացույց չի պահանջել և ձեռք չի բերվել վարչական վարույթի ողջ ընթացքում, այնինչ՝ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը, ստանալով զննմամբ ձեռք բերված ամփոփ տվյալները, (...) օրենքով սահմանված կարգով չի ձեռնարկել համապատասխան միջոցառումներ այդ մասով վարչական վարույթ հարուցելու և համապատասխան ընթացք տալու համար:

(...)

Ինչ վերաբերում է Աստղիկ Բալասանյանի կողմից ծառայողական քննության նյութերին ծանոթանալուց հետո՝ 2024 թվականի սեպտեմբերի 27-ին ներկայացված միջնորդությանը, ապա պետք է արձանագրել, որ որևէ ակտի նախագիծը կոնկրետ մասնագիտական վարչությանը, ինչպես նաև Տեսչական մարմնի ղեկավարին համաձայնեցման ներկայացնելը, հանդիսանում է որևէ ակտ կայացնելուն նախորդող ընթացակարգային գործընթաց է, որը ներառված չէ նաև Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 19-ի թիվ 1910-Ա հրամանով հաստատված կարգում:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ բողոքարկման վարույթի շրջանակներում վերոգրյալ խախտումների արդյունքում 2024 թվականի հուլիսի 4-ին ««Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն առաջադրանք տալու մասին» թիվ 0280 կարգադրագիրը ճանաչվել է անվավեր:»:

Ծառայողական քննության արդյունքում Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԱԿ 1090-Ա հրամանով Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Սպարտակ Գյուլումյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԱԿ 1102-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Արմինե Ղազարյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ԱԿ 1104-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Գրիշա Ղուկասյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԱԿ 1103-Ա հրամանով կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

3.4.5. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 01/8463-2025 գրությամբ նշվել է, որ «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ նկատմամբ իրականացված վարչական վարույթի արդյունքում կայացված կարգադրագիրը, որը վերադասության կարգով բեկանվել է, «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգով Ա. Բալասանյանի կողմից համաձայնեցվել է Տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության բաժնի պետ-տեսուչի հետ: Գրությամբ նշվել է, որ նկատի ունենալով, որ Տեսչական մարմնի տարածքային կենտրոնների կողմից իրականացվող վարչական վարույթների արդյունքում կարգադրագրերը արձակվում են (ստորագրվում են) տարածքային կենտրոնների պետերի անունից (պետերը պատասխանատվություն են կրում վարչական վարույթների համար), «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական կարգավորումներից ելնելով՝ ստորագրված փաստաթղթերն ուղարկվում են Տեսչական մարմնի ղեկավարին, որն էլ ուղարկում է փաստաթղթաշրջանառության բաժին՝ առաքման գործընթացն ապահովելու նպատակով:

3.4.6. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 01/8463-2025 գրությամբ նշվել է, որ 2024 թվականի ընթացքում տեսչական մարմնում հարուցվել է 16 ծառայողական քննություն, որոնցից 12-ը՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատողների նկատմամբ: Ըստ գրության՝ նշված ծառայողական քննությունները հարուցվել են ոչ պատշաճ վարչարարություն

իրականացնելու հիմքով, անկախ վերադասության կամ դատական կարգով բողոքարկված լինելու հանգամանքից, որոնցում որպես ծառայողական քննության կողմ ներգրավված են եղել նաև վարչարարության իրականացմանն անմիջական մասնակից աշխատակիցները:

Գրությամբ նշվել է, որ 2024 թվականին հարուցված ծառայողական քննությունների արդյունքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 25 աշխատող, այդ թվում՝ 11 ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատող, բացի այդ, ըստ գրության, 2025 թվականին նույնպես առկա են Տեսչական մարմնի ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցներ, որոնք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

3.4.7. Տեսչական մարմնի կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ 2024 թվականի ընթացքում նշանակված 12 ծառայողական քննության նյութերի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Նշված ծառայողական քննություններից 4-ը (01.08.2024թ., թիվ ԱԿ 814-Ա, 07.08.2024թ., թիվ ԱԿ 844-Ա, 11.03.2024, թիվ ԱԿ 199-Ա, 15.05.2024թ., թիվ ԱԿ 409-Ա) նշանակվել են Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից իրականացված ստուգումների շրջանակներում թույլ տրված խախտումները պարզելու նպատակով, 2-ը (17.10.2024թ., թիվ ԱԿ 1145-Ա, 27.03.2024թ., թիվ ԱԿ 259-Ա)՝ վերստուգման պատշաճությունն ու ամբողջականությունը պարզելու նպատակով, 1-ը (10.07.2024, թիվ ԱԿ 660-Ա)՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման կայացման շրջանակներում թույլ տրված խախտումները և դրանց հետևանքները պարզելու նպատակով, 1-ը (11.07.2024թ., թիվ ԱԿ 667-Ա)՝ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտման համար օրենքով սահմանված ժամկետներում պատասխանատվության միջոց չկիրառելու կապակցությամբ, 1-ը (10.05.2024թ., թիվ ԱԿ 395-Ա)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետները բաց են թողնվել, 1-ը (31.07.2024թ., թիվ ԱԿ 805-Ա)՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնվելու առթիվ, 1-ը (21.02.2024թ., թիվ ԱԿ 144-Ա)՝ Տեսչական մարմնին վերապահված բժշկական օգնության և սպասարկման բնագավառում 2024 թվականի համար ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների՝ ըստ ռիսկայնության աստիճանի պատշաճ դասակարգում իրականացված լինելու և նույն բնագավառում 2024 թվականի ստուգման ենթակա

տնտեսավարող սուբյեկտների ցանկերի պատշաճ ընտրություն կատարված լինելու հանգամանքները պարզելու նպատակով և 1-ը (12.04.2024թ., թիվ ԱԿ 304-Ա)՝ Տեսչական մարմնի վարչություններից մեկի աշխատանքային ցանցում հավաքագրված նյութերը ջնջվելու հանգամանքները պարզելու նպատակով:

Միաժամանակ, յուրաքանչյուր ծառայողական քննության շրջանակներում քննարկված ենթադրյալ կամ հաստատված խախտումն ու դրա հետևանքներն առանձնահատուկ են, այսինքն՝ չեն կրկնվում այլ վարույթներում: Այսպես, ծառայողական քննությունների շրջանակներում քննարկվել են հետևյալ ենթադրյալ կամ հաստատված խախտումները՝

- ստուգման ժամկետների երկարացման հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտին օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ծանոթացնելը (01.08.2024թ., թիվ ԱԿ 814-Ա),
- վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում վարույթի մասնակցի պատշաճ (օրենքով նախատեսված եղանակով) ծանուցումը չապահովելը (07.08.2024թ., թիվ ԱԿլ844-Ա),
- վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետները բաց թողնելը (10.05.2024թ., թիվ ԱԿ 395-Ա),
- կարգադրագրով տնտեսվարող սուբյեկտի՝ օրենսդրական ակտի սխալ՝ ստուգաթերթով արձանագրվածից տարբերվող իրավակարգավորումներ պահպանելու պարտականություն դնելը, որի արդյունքում հնարավոր չի եղել անձին ենթարկել վարչական պատասխանատվության (10.07.2024թ., թիվ ԱԿ 660-Ա),
- ստուգմանը վերաբերելի ապացույց ձեռք չբերելը, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտի խախտումը չի արձանագրվել (11.03.2024թ., թիվ ԱԿ 199-Ա),
- օրենքով սահմանված ժամկետում վարչական պատասխանատվության միջոց չկիրառելը (11.07.2024թ., թիվ ԱԿ 667-Ա),
- ստուգման ակտով Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատված ձևաթղթի պահանջները չապահովելը, ստուգման կասեցման և վերսկսման հետ կապված ընթացակարգային նորմերը խախտելը (15.05.2024թ., թիվ ԱԿ 409-Ա)՝

- Վերստուգման ընթացքում տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցամատյանում կատարված սխալները չարձանագրելը (17.10.2024թ., թիվ ԱԿ 1145-Ա),

- Վերստուգումն ամբողջությամբ ստուգաթերթի հիման վրա չիրականացնելը և իրավախախտումը վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունում չներառելը (27.03.2024թ., թիվ ԱԿ 259-Ա),

- Վերաքննիչ բողոքը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը (31.07.2024թ., թիվ ԱԿ 805-Ա),

- Տեսչական մարմնին վերապահված բժշկական օգնության և սպասարկման բնագավառում 2024 թվականի համար ստուգման ենթակա տնտեսվարող սուբյեկտների՝ ըստ ռիսկայնության աստիճանի պատշաճ դասակարգում չիրականացնելը և ստուգման ենթակա տնտեսվարող սուբյեկտների ցանկերի պատշաճ ընտրություն չկատարելը (21.02.2024թ., թիվ ԱԿ 144-Ա),

- Տեսչական մարմնի վարչություններից մեկի աշխատանքային ցանցում հավաքագրված նյութերը ջնջվելը (12.04.2024թ., թիվ ԱԿ 304-Ա):

Նշված ծառայողական քննություններից 3-ը նշանակվել են Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետի զեկուցագրերի հիման վրա, որոնցով նշվել է, որ խախտումը բացահայտվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշման կամ կարգադրագրի վերաբերյալ վերադասության կարգով ներկայացված բողոքի քննության (07.08.2024թ., թիվ ԱԿ 844-Ա) կամ դատարան ներկայացված հայցադիմումի ուսումնասիրության (10.07.2024թ., թիվ ԱԿ 660-Ա, 15.05.2024թ., թիվ ԱԿ 409-Ա) արդյունքում:

Նշված ծառայողական քննությունների շրջանակներում կարգապահական տույժ է կիրառվել 19 անձի նկատմամբ, որոնցից 17-ի նկատմամբ կիրառվել է նկատողություն, 1-ի նկատմամբ՝ խիստ նկատողություն, 1 անձի նկատմամբ՝ ծառայության դադարեցում: Նշված անձանցից մեկը կարգապահական տույժի ենթարկվելուն նախորդող մեկ տարվա ընթացքում ծառայողական տույժի է ենթարկված եղել, ում նկատմամբ երկրորդ անգամ՝ Տեսչական մարմնի 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ ԱԿ 660-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության արդյունքներով ևս կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Կարգապահական տույժ է նշանակվել 7 ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ, որոնց թվում՝ Հարավային

տարածքային կենտրոնի պետը, Տեսչական մարմնում վարչության պետի պաշտոն զբաղեցնող 2 և բաժնի պետի պաշտոն զբաղեցնող 4 անձինք:

3.4.8. 2023 թվականին Տեսչական մարմնի Արևելյան տարածքային կենտրոնի կողմից իրականացվել է 1049 վերահսկողական գործառույթ (վարույթի հարուցում, ստուգման, վերստուգման հանձնարարագրեր), որը Տեսչական մարմնի այլ ստորաբաժանումների շրջանում գրանցված ցուցանիշներից երկրորդն է (գերազանցել է միայն Երևան քաղաքի տարածքային կենտրոնը՝ 1111 վերահսկողական գործառույթ): 2024 թվականին Տեսչական մարմնի Արևելյան տարածքային կենտրոնի կողմից իրականացվել է 671 վերահսկողական գործառույթ. նշված քանակական ցուցանիշը Տեսչական մարմնի ստորաբաժանումների շրջանում երկրորդն է (գերազանցում է միայն Երևան քաղաքի տարածքային կենտրոնը՝ 993 գործառույթ, հաջորդում է Արևմտյան տարածքային կենտրոնը՝ 666 գործառույթ):

3.4.9. 2023 թվականին Արևելյան տարածքային կենտրոնի պետի պաշտոնը թափուր է եղել:

3.4.10. «Արաբկիր ԱԿ» ՓԲԸ-ում իրականացված վարչարարության արդյունքում կայացված 2024 թվականի հունիսի 24-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0998 որոշումը, 2024 թվականի օգոստոսի 20-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1279 որոշումը, 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 0192 կարգադրագիրը և 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 0342 կարգադրագիրը բեկանվել են:

Միաժամանակ, Տեսչական մարմինը հայտնել է, որ «Արաբկիր ԱԿ» ՓԲԸ-ում, «Վիոլետա ԲԿ» ՍՊԸ-ում, «Կանարդ» ՍՊԸ-ում, «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն» ՍՊԸ-ում, «Արսանա» ՓԲԸ-ում իրականացված վարչարարության արդյունքում աշխատանքային խմբի կողմից ստուգաթերթերի պատասխանները ոչ ճիշտ ձևավորելու դեպքեր չեն արձանագրվել:

3.4.11. Տեսչական մարմնի գրությամբ ծառայողական ավտոմեքենաների գործածման վերաբերյալ նշվել է, որ Տեսչական մարմնի աշխատողների կողմից ծառայողական ավտոմեքենաները աշխատավայրից տուն և տնից աշխատավայր մեկնելու նպատակով չեն գործածվում, այդ թվում՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից: Օրվա ավարտին ծառայողական ավտոմեքենաները կայանվում են համապատասխան վարչական շենքի տարածքում: Գրության համաձայն՝ Տեսչական մարմնին հատկացված ծառայողական ավտոմեքենաները գործածվում են

բացառապես աշխատողների ծառայողական լիազորությունների և դրանց նպատակների իրականացման համար (ստուգումներ, վարչական վարույթներ, սեմինարներ, իրազեկման աշխատանքներ, այլ մարմիններում կայացող հանդիպումներ, քննարկումներ և այլն):

Գրությամբ նաև նշվել է, որ մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 92-Ա որոշման ընդունումը Տեսչական մարմնին կցված 19 ծառայողական ավտոմեքենաները բաշխված են եղել կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ ըստ անհրաժեշտության: Աստղիկ Բալասանյանի պաշտոնավարումից առաջ, պաշտոնավարման ընթացքում և դրանից հետո (մինչ այժմ) Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնին կցագրված է 2 ծառայողական ավտոմեքենա: Ավտոմեքենաները կցագրված են եղել հետևյալ համամասնությամբ՝

1) Կենտրոնական ապարատ՝ 6 մեքենա,

2) Երևան քաղաքի տարածքային կենտրոն՝ 3 մեքենա,

3) Հյուսիսային տարածքային կենտրոն՝ 4 մեքենա, այդ թվում՝ 1-ը վթարված է և ենթակա չէ շահագործման (Գյումրու և Իջևանի բաժիններ),

4) Արևմտյան տարածքային կենտրոն՝ 2 մեքենա (Էջմիածնի բաժին),

5) Արևելյան տարածքային կենտրոն՝ 2 մեքենա (Գավառի բաժին),

6) Հարավային տարածքային կենտրոն՝ 2 մեքենա (Կապանի բաժին):

Գրության համաձայն՝ յուրաքանչյուր ծառայողական մեքենա սպասարկել է համապատասխան տարածքային կենտրոնի աշխատողներին, որի ընթացքում, ըստ անհրաժեշտության և աշխատանքների ծանրաբեռնվածությունից ելնելով, որոշ դեպքերում սպասարկել են նաև այլ տարածքային կենտրոնի աշխատողներին, օրինակ՝ Երևան քաղաքի տարածքային կենտրոնին կցագրված ավտոմեքենան սպասարկել է Տեսչական մարմնի գլխամասի կառուցվածքային ստորաբաժանման աշխատողներին կամ Տեսչական մարմնի գլխամասի կառուցվածքային ստորաբաժանմանը կցագրված մեքենան՝ Արևելյան տարածքային կենտրոնի աշխատողներին: Պայմանավորված վերոնշյալ հիմնավորմամբ Արևելյան տարածքային կենտրոնի վարորդի հաստիքը զբաղեցնող աշխատողը մինչև Աստղիկ Բալասանյանի պաշտոնավարումը, պաշտոնավարման ընթացքում և հետո (մինչ այսօր) սպասարկում է կենտրոնական ապարատի աշխատողներին:

3.5. Աստղիկ Բալասանյանն Արևելյան տարածքային կենտրոնի ղեկավարի պաշտոնում նշանակվել է 2024 թվականի հունվարի 12-ին:

3.6. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրության ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.6.1. Գրության համաձայն՝ «Արաբկիր ԱԿ» ՓԲԸ-ում իրականացված վարչարարության արդյունքում կայացված վարչական ակտերի բեկանման հիմք է հանդիսացել այն, որ վարչական ակտերում արձանագրված՝ ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի 53-րդ կետի 1-ին ենթակետի (մինչև 26.08.2024թ. N 271-Ն խմբագրությունը) խախտման փաստերը չեն հստակեցվել և որոշակի չեն: Այսինքն, նշված նորմի համաձայն՝ «Պատվաստումից առաջ գնահատվում է պատվաստվող անձի ընդհանուր առողջական վիճակը. պլանային պատվաստումների դեպքում բժիշկը հավաքում է մանրակրկիտ վերհուշ, կատարում է սուբյեկտիվ և օբյեկտիվ զննում, ջերմաչափում: Զննման և ջերմաչափման տվյալները բժշկի կողմից գրանցվում են ամբուլատոր քարտում»: Սակայն, վարույթի արդյունքում արձանագրելով, որ սուբյեկտիվ և օբյեկտիվ զննման տվյալները մեկ անձի դեպքով գրանցված չեն ամբուլատոր քարտում՝ որոշակի չի հստակեցվել, թե ինչում են կայացել այդ զննման գործողությունները, որոնք չեն իրականացվել, ինչը հստակեցման և ապացուցման կարիք է ունեցել, որը տվյալ վարույթի արդյունքներում չի ապահովվել: Տեսչական մարմնի գրությամբ նշվել է, որ նշված սուբյեկտիվ և օբյեկտիվ զննությունների գործողությունների տարբերակման վերաբերյալ չնշելն իրենից չի կարող ենթադրել հանրային մեծ վտանգավորություն և առաջացնել հանրորեն վտանգավոր հետևանքներ:

3.6.2. Գրությամբ ներկայացվել են Ա.Բալասանյանի պաշտոնավարման ընթացքում Տեսչական մարմնի Արևելյան տարածքային կենտրոնի վարորդի պաշտոնը զբաղեցրած անձի և Տեսչական մարմնում վարորդի պաշտոն զբաղեցնող մյուս անձանց, ինչպես նաև Արևելյան տարածքային կենտրոնին կցված 2 ավտոմեքենաները (LADA X RAY, 716 SS 60, NISSAN X TRAIL, 663 SS 60) վարող աշխատակիցների՝ Արևելյան տարածքային կենտրոնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի մասնագետի և Գավառի բաժնի պետ-տեսուչի՝ Հանձնաժողովի կողմից պահանջված տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե):

Գրության համաձայն՝ Արևելյան տարածքային կենտրոնին սպասարկող երկու ծառայողական ավտոմեքենաները մինչև Աստղիկ Բալասանյանի պաշտոնավարումը, պաշտոնավարման ընթացքում և հետո (մինչ այսօր) սպասարկում են բացառապես Արևելյան տարածքային կենտրոնի աշխատողներին: Գրությամբ նաև նշվել է, որ Արևելյան տարածքային կենտրոնի վարորդի հաստիքը զբաղեցնող աշխատողին կցագրված է Տեսչական մարմնի կենտրոնական ապարատի համար նախատեսված ծառայողական ավտոմեքենա, և նրան երբևէ կցագրված չի եղել Արևելյան տարածքային կենտրոնին սպասարկող ծառայողական ավտոմեքենաներից որևէ մեկը:

3.6.3. Գրությանը կից ներկայացվել է Տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1426-Ա հրամանը, որով Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի վարորդ Արշավիր Զաքարյանին կցագրվել է Տեսչական մարմնին հանձված TOYOTA/CAMRY 2.5 GAS մակնիշի ավտոմեքենան: Գրությանը կից ներկայացվել են նաև Արշավիր Զաքարյանի և Տեսչական մարմնի ղեկավարի միջև 2023 թվականի նոյեմբերի 23-ին կնքված՝ տրանսպորտային միջոցի համար լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիրը և ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտը:

3.7. Տեսչական մարմնի վարորդի հաստիքը զբաղեցնող Արշավիր Զաքարյանը, Արայիկ Պողոսյանը, Արայիկ Աստվածատրյանը, Ալեքսան Գրիգորյանը, Կարեն Գևորգյանը, Տիգրան Վերմիշյանը, Վահագն Սարգսյանը և Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի պետ-տեսուչ Պարույր Կուռոյանը Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակցի հետ 2025 թվականի մայիսի 8-ին հեռախոսազրույցների ընթացքում հայտնել են, որ ծառայողական ավտոմեքենաները չեն գործածում Տեսչական մարմնի աշխատակիցներին տնից աշխատավայր և աշխատավայրից տուն փոխադրելու համար: Նշված անձինք նաև հայտնել են, որ ծառայողական ավտոմեքենաներն իրենք ևս չեն գործածում նշված նպատակով, աշխատանքային օրվա ավարտին ծառայողական ավտոմեքենաները կայանում են համապատասխան ստորաբաժանման վարչական շենքի դիմաց և իրենց միջոցներով (սեփական ավտոմեքենայով, ոտքով, հասարակական տրանսպորտով, այլ աշխատակիցների ավտոմեքենաներով) են տնից աշխատավայր, աշխատավայրից տուն գնում:

Վահագն Սարգսյանը, Կարեն Գևորգյանը, Պարույր Կուռոյանը, Տիգրան Վերմիշյանը հայտնել են, որ իրականացնում են և մշտապես իրականացրել են միայն այն տարածքային կենտրոնի կամ ստորաբաժանման աշխատակիցների սպասարկումը, որի հաստիքը զբաղեցնում են: Արայիկ Աստվածատրյանը հայտնել է, որ Կենտրոնական ապարատի վարորդի հաստիքն է զբաղեցնում, սակայն ըստ անհրաժեշտության սպասարկում է նաև Երևան քաղաքի տարածքային կենտրոնի աշխատակիցներին: Ալեքսան Գրիգորյանը հայտնել է, որ հնարավոր է այնպիսի դեպքեր եղած լինեն, երբ անհրաժեշտությունից ելնելով, պայմանավորված այլ ստորաբաժանման վարորդի բացակայությամբ, ինքը նաև տվյալ ստորաբաժանմանը սպասարկի:

Արևելյան կենտրոնի վարորդի հաստիքը զբաղեցնող Արշավիր Զաքարյանը հայտնել է, որ Տեսչական մարմնում աշխատանքի անցնելու առաջին օրվանից՝ 2023 թվականի նոյեմբերից՝ կցված է եղել Կենտրոնական ապարատին և երբևէ չի աշխատել Արևելյան կենտրոնում:

Վերոնշյալ բոլոր անձինք հայտնել են, որ փոխադրումներն իրականացնում են ըստ անհրաժեշտության, հիմնականում ստուգումների, գործուղումների շրջանակներում, իրենց բանավոր կերպով նախապես հայտնում են փոխադրման օրվա, ժամի և փոխադրվող անձանց մասին:

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածով սահմանվում է օբյեկտիվության սկզբունքը և նախատեսվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:

(...)»:

4.2. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),

համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.3. Վարքագծի կանոնագրքի 1-ին կետի համաձայն՝ կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:

4.4. Վարքագծի կանոնագրքի 13-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չչարաշահել վերադաս լիազորությունը՝ չտալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող կամ իր կամ կատարողի լիազորությունների շրջանակից դուրս բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, ինչպես նաև այնպիսի հանձնարարականներ, որոնց կատարումը հանգեցնում է մարդու իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ պաշտոնի հեղինակազրկման: (...) »:

4.5. Վարքագծի կանոնագրքի 56-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ նման կասկած չհարուցվի կամ ողջամտորեն նման տպավորություն չստեղծվի:»:

4.6. Վարքագծի կանոնագրքի 57-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս պարտավոր է չառաջնորդվել ենթադրություններով, մասնավոր նախասիրություններով, հույզերով, վախերով, անձնական վերաբերմունքով կամ այլ կողմնակի ներազդեցությամբ, հիմնվել բացառապես վերաբերելի փաստերի և հստակ չափանիշների վրա:»:

4.7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)»:

4.7. «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Տեսչական մարմնի ղեկավարը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

(...)

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրագրեր և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

7) օրենքով իրեն վերապահված իրավասության սահմաններում նշանակումներ է կատարում տեսչական մարմնի պաշտոններում, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոններում, ինչպես նաև աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և պատասխանատվության միջոցներ.

8) իրականացնում է վերահսկողություն տեսչական մարմնին ամրացված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

(…):»:

4.8. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 4-րդ կետի համաձայն.

«4. Սույն կարգի համաձայն պետական մարմինների ծառայողական ավտոմեքենա են համարվում՝

1) պետական մարմնի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձանց սպասարկելու նպատակով նախատեսված ավտոմեքենաները (այսուհետ՝ պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաներ), որոնք հատկացվում են նրանց կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ իրականացնելու համար.

2) պետական մարմինների անձնակազմերի սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաները, որոնք հատկացվում են նրանց կողմից պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ և որոշակի կանոնադրական գործառույթներ իրականացնելու նպատակով:»:

4.9. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 16-րդ կետի համաձայն.

«Պետական մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաներն ամրացվում են համապատասխան պետական մարմնի աշխատակազմի ղեկավարի կամ գլխավոր քարտուղարի համապատասխան իրավական ակտով, որում նշվում են տվյալ պաշտոնատար անձին ամրացվող ավտոմեքենայի բնութագրիչ (այդ թվում՝ տեխնիկական) տվյալները:»:

4.10. ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ հաստատված՝ Տեսչական մարմնի կանոնադրության (այսուհետ՝ Տեսչական մարմնի կանոնադրություն) 31-րդ կետի համաձայն.

«Տեսչական մարմնի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեսչական մարմնի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:»:

4.11. Տեսչական մարմնի կանոնադրության 32-րդ կետի համաձայն՝

«Տեսչական մարմինը փիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:»:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումները

5.1. Ենթադրյալ խտրական, կողմնակալ և ոչ անաչառ վերաբերմունքի դրսևորման կապակցությամբ

Խտրականության արգելքը նախատեսվել է Սահմանադրության 29-րդ հոդվածով: Սահմանադրական դատարանը 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ՝ *«…խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:* 2011թ. հունիսի 7-ի ՍԴՈ-967 որոշմամբ նշվել է. *«Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»:*

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 56-րդ և 57-րդ կետերի խախտման առկայությունն արձանագրելու համար անհրաժեշտ է, որ հաստատվի Տեսչական մարմնի ղեկավար Ս.Սարգսյանի կողմից ծառայողական քննություն նշանակելու և կարգապահական տույժ կիրառելու լիազորություններն իրականացնելիս նույն իրավիճակում գտնվող (նույն կամ նույնաբնույթ կարգապահական խախտում կատարած) աշխատակիցների նկատմամբ տարբերակված վերաբերմունք կամ մոտեցում ցուցաբերելու հանգամանքը: Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա չէ Ա.Բալասանյանի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու կամ նրան կարգապահական տույժի ենթարկելու մասին հրամանների իրավաչափությունը: Հանձնաժողովը միայն քննարկում է՝ արդյոք նշված ծառայողական քննությունների նշանակմամբ և կարգապահական տույժերի

կիրառմամբ Ա.Բալասանյանի նկատմամբ դրսևորվել է կողմնակալ և խտրական վերաբերմունք՝ ի համեմատություն Տեսչական մարմնի այլ պաշտոնատար անձանց:

Վերոգրյալի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը՝

Դիմումով նշվել է, որ Ա.Բալասանյանի նկատմամբ 2024 թվականին 3 ծառայողական քննությունները նշանակվել են վերադասությամբ վարչական ակտերի բողոքարկման արդյունքում վարչական ակտերը բեկանվելու պատճառով, իսկ 1-ը՝ ստուգում իրականացրած աշխատանքային խմբի կողմից ստուգաթերթի մեկ հարցի պատասխանը ճիշտ չձևավորելու պատճառով: Ինչպես Դիմումով, այնպես էլ Ա.Բալասանյանի՝ Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 25-ին մուտքագրված գրությամբ նշված ծառայողական քննությունների նշանակման շրջանակներում խտրական և կողմնակալ վերաբերմունքի դրսևորումը հիմնավորվել է այն հանգամանքով, որ բողոքարկման արդյունքում Տեսչական մարմնի այլ պաշտոնատար անձանց կողմից ընդունված վարչական շատ ակտեր բեկանվել են կամ ուղարկվել նոր քննության, արձանագրվել են դեպքեր, երբ ստուգաթերթերի պատասխաններն աշխատանքային խմբի կողմից ճիշտ չեն ձևավորվել, սակայն Տեսչական մարմնի ղեկավարի կողմից նշված դեպքերում Տեսչական մարմնի աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություններ չեն նշանակվել: Այլ խոսքերով, ըստ Ա.Բալասանյանի, նույնական փաստական հանգամանքներում (կայացված վարչական ակտը բեկանվելու կամ ստուգաթերթում սխալ հայտնաբերվելու պարագայում) այլ պաշտոնատար անձանց նկատմամբ չեն նշանակվել ծառայողական քննություններ, այն դեպքում, երբ Ա.Բալասանյանի նկատմամբ նշանակվել են:

Ա.Բալասանյանի կողմից, որպես ապացույց, ներկայացվել են 2021-2024 թվականներին Տեսչական մարմնի բողոքարկված և բեկանված վարչական ակտերի թվերը՝ հիմնվելով Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակված պաշտոնական տվյալների վրա: Հանձնաժողովը, Ա.Բալասանյանի ներկայացրած տվյալները համադրելով Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակված տարեկան հաշվետվությունների հետ՝ արձանագրում է հետևյալը՝

- 2024 թվականին դատական կարգով ներկայացված բողոքների առթիվ կայացվել է 362 դատական ակտ, որոնցից 237-ը՝ հօգուտ բողոքաբերի,

- 2023 թվականին Տեսչական մարմնին ներկայացված 183 վարչական բողոքից բավարարվել է 34-ը, դատական կարգով ներկայացված բողոքների առթիվ կայացվել է 224 դատական ակտ, որոնցից 143-ը՝ հօգուտ բողոքաբերի,

- 2022 թվականին Տեսչական մարմնին ներկայացված 123 վարչական բողոքից 41-ը բավարարվել է, դատական կարգով ներկայացված բողոքների առթիվ կայացվել է 148 դատական ակտ, որոնցից 107-ը՝ հօգուտ բողոքաբերի,

- 2021 թվականին դատական կարգով ներկայացված բողոքների առթիվ կայացվել է 48 դատական ակտ, որոնցից 36-ը՝ հօգուտ բողոքաբերի:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Ա.Բալասանյանի կողմից ներկայացված՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ Ա.Բալասանյանին հասցեագրված 2025 թվականի փետրվարի 25-ի թիվ 04/3816-2025 գրությունը, որի համաձայն՝ 2020-2025 թվականներին Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից կայացված վարչական ակտերից վերադասության կարգով վերացվել կամ անվավեր են ճանաչվել 191 վարչական ակտ, իսկ դատական կարգով՝ 538 վարչական ակտ: Նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնում իրականացվել է 120 ծառայողական քննություն, սակայն դրանց հիմքերի մասով հաշվառում չի կատարվել:

Հանձնաժողովն ուսումնասիրել է 2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից նշանակված 16, այդ թվում՝ Ա.Բալասանյանի նկատմամբ նշանակված 4 ծառայողական քննության նյութերը, ինչի հիման վրա արձանագրում է հետևյալը.

Ա.Բալասանյանի նկատմամբ կարգապահական տույժեր են կիրառվել Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ԱԿ 967-Ա, 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 881-Ա և 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 883-Ա հրամաններով նշանակված ծառայողական քննությունների արդյունքում:

Նշված ծառայողական քննություններից առաջինը (թիվ ԱԿ 967-Ա) նշանակվել է Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի աշխատակիցների կողմից ստուգաթերթում սխալ տվյալներ լրացնելու կապակցությամբ: Ա.Բալասանյանը ծառայողական քննության շրջանակներում որպես կողմ ներգրավվել է՝ ստուգումն իրականացնող անձանց վրա դրված պարտականությունների, գործողությունների պատշաճ կատարման նկատմամբ հսկողություն չիրականացնելու համար: Ընդ որում, նշված ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ

արձանագրվել է, որ ստուգման շրջանակներում կատարված սխալը վերաբերել է պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից հեպատիտ Բ-ի, Ց-ի, ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով ստացիոնար բուժման դիմող անձանց և բուժաշխատողների հետազոտություններ իրականացնելու հանգամանքին՝ հեպատիտ Բ-ի և հեպատիտ Ց-ի դրոշմների նկատմամբ: Այն պայմաններում, երբ նշված հանգամանքը ստուգաթերթով հաստատված է համարվել, ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ արձանագրվել է, որ ստուգման շրջանակներում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել, որ ՊՈԱԿ-ում համապատասխան հետազոտությունները պատշաճ են իրականացվել:

Եզրակացությամբ նաև արձանագրվել է, որ ոչ պատշաճ ստուգման արդյունքում կարող են լինել այնպիսի բուժաշխատողներ, որոնք հնարավոր է՝ վարակված լինեն վիրուսային հեպատիտ Բ-ով կամ Ց-ով, որի ենթադրյալ առկայության պայմաններում վտանգվում է ՊՈԱԿ-ում գտնվող բուժաշխատողների և պացիենտների առողջությունը:

Նշված ծառայողական քննության շրջանակներում որպես ծառայողական քննության կողմ են ներգրավվել նաև ստուգումն իրականացրած 2 պաշտոնատար անձինք, որոնք ևս ենթարկվել են կարգապահական տույժի՝ խիստ նկատողության:

Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել է «ծառայության դադարեցում» կարգապահական տույժը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ծառայողական քննության արդյունքների եզրակացությամբ արձանագրվել է, որ դրան նախորդող մեկ տարվա ընթացքում Ա.Բալասանյանն արդեն իսկ ենթարկվել է «նկատողություն» և «խիստ նկատողություն» կարգապահական տույժերի:

Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 881-Ա հրամանով նշանակված ծառայողական քննությունը վերաբերել է Ա.Բալասանյանի կողմից ստորագրված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0958 որոշման իրավաչափությունը պարզելուն: Հանձնաժողովն արձանագրում է, որ ծառայողական քննության շրջանակներում, որպես Ա.Բալասանյանի կողմից կատարված խախտում, պարզապես չի դիտարկվել նշված որոշման բեկանված լինելու հանգամանքը: Այսպես, ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ արձանագրվել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ ներառվել է այնպիսի վարչական իրավախախտում, որի նկատմամբ վերահսկողությունն օրենքով դրված չէ Տեսչական մարմնի վրա, մինչդեռ վարչական տույժ կիրառելու մասին

որոշմամբ խախտման նկարագրությունը փոխվել է, և տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ տույժ է կիրառվել այլ իրավախախտման համար:

Նշված ծառայողական քննության արդյունքում կարգապահական տույժ է կիրառվել ոչ միայն Ա.Բալասանյանի, այլ նաև նշված վարչական վարույթի իրականացման գործընթացում ներգրավված 3 այլ պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ, ինչպես և Ա.Բալասանյանի, կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 883-Ա հրամանով նշանակված ծառայողական քննությունը վերաբերել է Ա.Բալասանյանի կողմից տրված թիվ 0280 կարգադրագրի իրավաչափությունը պարզելուն: Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված ծառայողական քննության շրջանակներում ևս ակտի բեկանման փաստը չի դիտարկվել որպես ինքնին խախտում արձանագրելու հիմք: Ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ արձանագրվել են պաշտոնատար անձանց կողմից կատարված մի շարք կարգապահական խախտումներ՝ կապված, մասնավորապես, վարույթի երկարաձգման ոչ բավարար հիմնավորվածության, առանց անհրաժեշտության երկրորդ լսումներ անցկացնելու հետ, որոնցից ելնելով՝ արձանագրվել է, որ խախտվել է վարչական մարմնի արագ գործելու օրենսդրական պարտականությունը: Բացի այդ, արձանագրվել են նաև այլ խախտումներ, որոնք վերաբերել են տուժանքի հաշվարկման հետ կապված սխալներին, բուժաշխատողի կողմից կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ անհրաժեշտ ապացույց ձեռք բերելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելուն, բուժաշխատողի գործունեության վերաբերյալ սխալ եզրահանգումներ կատարելուն:

Նշված ծառայողական քննության արդյունքում Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Կարգապահական պատասխանատվության է ենթարկվել նաև նշված վարչական վարույթի իրականացմանը ներգրավված 3 այլ պաշտոնատար անձ, որոնց նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

Հանձնաժողովը, այսպիսով, արձանագրում է, որ հիմնավոր չէ Ա.Բալասանյանի պնդումն առ այն, որ նրա նկատմամբ ծառայողական քննություն է նշանակվել պարզապես վարչական ակտի բեկանման հիմքով՝ նկատի ունենալով, որ ինչպես թիվ

ԱԿ 881-Ա, այնպես էլ թիվ ԱԿ 883-Ա հրամաններով նշանակված ծառայողական քննությունների շրջանակներում դիտարկվել են ոչ թե պարզապես վարչական ակտերի բեկանման հանգամանքը, այլ ըստ ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությունների՝ որպես խախտում դիտարկված՝ աշխատակիցների գործողությունները և դրանց հետևանքները: Մասնավորապես, առաջին դեպքում վարույթի արդյունքում վարչական տույժ է կիրառվել անձի նկատմամբ, որը, համաձայն ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացության, կատարել է Տեսչական մարմնի իրավասությանը ոչ վերաբերելի իրավախախտում, իսկ երկրորդ դեպքում, ըստ ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացության, կատարվել են մի շարք ընթացակարգային և բովանդակային խախտումներ, այդ թվում՝ կապված ապացույցների ձեռքբերման հետ, որի արդյունքում անձի նկատմամբ ենթադրյալ խախտման համար պատասխանատվություն չի կիրառվել:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ Ա.Բալասանյանը որպես կողմ ներգրավվել է նաև Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԱԿ 882-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության շրջանակներում, որը վերաբերել է նրա կողմից վարչական վարույթի ընթացքում վարչական վարույթի մասնակցի կատարած ծախսերի փոխհատուցման վերաբերյալ գործողությունների իրավաչափությանը: Նշված ծառայողական քննության արդյունքները Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդունվել են ի գիտություն և Ա.Բալասանյանը կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Անդրադառնալով նույնական պայմաններում այլ պաշտոնատար անձանց նկատմամբ ծառայողական քննություն չնշանակելու վերաբերյալ Դիմումով ներկայացված պնդումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոնշյալ 3 ծառայողական քննությունների արդյունքում, որոնց ավարտին Ա.Բալասանյանի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, կարգապահական պատասխանատվության են ենթարկվել Տեսչական մարմնի 8 այլ աշխատակիցներ:

Հանձնաժողովը նաև կարևորում է այն հանգամանքը, որ թիվ ԱԿ 883-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ անդրադարձ է կատարվել և գնահատվել է այն հանգամանքը, որ կարգադրագիրը «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով համաձայնեցրել է կարգադրագիրը Տեսչական մարմնի այլ պաշտոնատար անձանց

հետ: Այս առումով Հանձնաժողովը նաև ընդունելի է համարում, որ նշված կարգապահական խախտումը չի կարող վերագրելի լինել Տեսչական մարմնի ղեկավարին՝ չնայած փաստաթղթաշրջանառության համակարգով նրա կողմից կարգադրագիրը հաստատված լինելու հանգամանքին՝ նկատի ունենալով Տեսչական մարմնի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 01/8463-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ վարչական վարույթների արդյունքում կարգադրագրերը արձակվում են (ստորագրվում են) տարածքային կենտրոնների պետերի անունից, իսկ Տեսչական մարմնի ղեկավարին դրանք ներկայացվում են փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական կարգավորումներից ելնելով՝ փաստաթղթաշրջանառության բաժին կարգադրագրերն ուղարկելու համար: Այն հանգամանքը, որ կարգադրագիրը ստորագրվել է Ա.Բալասանյանի կողմից, հաստատվել է նաև նշված ծառայողական քննության նյութերի ուսումնասիրությամբ:

Տեսչական մարմնում 2024 թվականի ընթացքում նշանակված մնացած 12 ծառայողական քննությունների նյութերի և դրանց արդյունքում կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ հրամանների ուսումնասիրությամբ Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ նշված ծառայողական քննություններից 4-ը նշանակվել են ստուգումների, 1-ը՝ վերստուգման շրջանակներում թույլ տրված խախտումները պարզելու նպատակով: Ընդ որում, ծառայողական քննություններից մեկը վերաբերել է ստուգման ակտով ձևաթղթի պահանջները չապահովելուն (15.05.2024թ., թիվ ԱԿ 409-Ա), 2-ը՝ վերստուգման ընթացքում տնտեսվարող սուբյեկտի իրավախախտումները չարձանագրելուն (17.10.2024թ., թիվ ԱԿ 1145-Ա, 27.03.2024թ., թիվ ԱԿ 259-Ա):

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև նշված վարույթները չեն վերաբերել հենց ստուգաթերթում սխալ նշում կատարելուն, դրանք առնչվել են նման բնույթ ունեցող խախտումներին՝ կապված ստուգաթերթի լրացման կամ ստուգումը ստուգաթերթի հիման վրա չիրականացնելու հետ:

Բացի այդ, 2024 թվականի ընթացքում նշանակված ծառայողական քննություններից 3-ը նշանակվել է Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետի զեկուցագրերի հիման վրա, որոնցով նշվել է, որ խախտումը բացահայտվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշման կամ կարգադրագրի վերաբերյալ վերադասության կարգով ներկայացված բողոքի

քննության (07.08.2024թ., թիվ ԱԿ 844-Ա) կամ դատարան ներկայացված հայցադիմումի ուսումնասիրության (10.07.2024թ., թիվ ԱԿ 660-Ա, 15.05.2024թ., թիվ ԱԿ 409-Ա) արդյունքում: Ըստ այդմ, Հանձնաժողովը նաև հիմնավոր չի համարում Դիմումով ներկայացված պնդումն առ այն, որ Տեսչական մարմնի այլ պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական ակտի բեկանման հիմքով ծառայողական քննություն չի նշանակվել, քանի որ նշված դեպքերում, ինչպես և Ա.Բալասանյանի նկատմամբ նշանակված ծառայողական քննությունների պարագայում, քննության նշանակման առիթ է հանդիսացել վարչական ակտի բողոքարկման արդյունքում դրա ուսումնասիրումը, որի հետևանքով բացահայտվել են այնպիսի խախտումներ, որոնք Տեսչական մարմնի Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետի կողմից դիտարկվել են որպես բավարար էական՝ Տեսչական մարմնին զեկուցագրի ներկայացման համար:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ ծառայողական քննություններից մեկը վերաբերել է ստուգմանը վերաբերելի ապացույց ձեռք չբերելուն, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտի խախտումը չի արձանագրվել (11.03.2024թ., թիվ ԱԿ 199-Ա): Նշված խախտումն իր էությամբ նման է Ա.Բալասանյանի նկատմամբ թիվ ԱԿ 883-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ արձանագրված խախտումներից մեկին, որի առնչությամբ եզրակացությամբ նշվել էր, որ անհրաժեշտ ապացույց չի պահանջվել և ձեռք չի բերվել վարչական վարույթի ողջ ընթացքում, այնինչ՝ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը, ստանալով զննմամբ ձեռք բերված ամփոփ տվյալները, (...) օրենքով սահմանված կարգով չի ձեռնարկել համապատասխան միջոցառումներ այդ մասով վարչական վարույթ հարուցելու և համապատասխան ընթացք տալու համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոնշյալ դեպքերում արձանագրված խախտումների հետ կապված փաստական հանգամանքները չեն նույնանում, այլ միայն խախտումները նման են իրենց բնույթով կամ հետևանքներով: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը կարևորում է այս հանգամանքը ծառայողական քննության նշանակման շրջանակներում տարբերակված վերաբերմունքի առկայությունը գնահատելու տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված յուրաքանչյուր ծառայողական քննության շրջանակներում քննարկված ենթադրյալ կամ հաստատված խախտումը և դրա հետ կապված

փաստական հանգամանքներն առանձնահատուկ են, այսինքն՝ չեն կրկնվում այլ վարույթներում:

Հանձնաժողովը նաև կարևորում է այն հանգամանքը, որ ուսումնասիրված ծառայողական քննությունների արդյունքում կարգապահական տույժ է կիրառվել 19 անձի նկատմամբ, այդ թվում՝ 7 ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, որոնց թվում՝ Հարավային տարածքային կենտրոնի պետը, Տեսչական մարմնում վարչության պետի պաշտոն զբաղեցնող 2 և բաժնի պետի պաշտոն զբաղեցնող 4 անձինք:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ գրեթե բոլոր դեպքերում, եթե կարգապահական խախտում կատարած աշխատակիցը խախտմանը նախորդող մեկ տարվա ընթացքում չի ենթարկվել ծառայողական տույժի, նրա նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Ընդ որում, 2024 թվականի ընթացքում նկատողություն է կիրառվել 17 պաշտոնատար անձի նկատմամբ: Հանձնաժողովը ծառայողական քննությունների նյութերի ուսումնասիրմամբ արձանագրել է միայն մեկ դեպք, երբ կարգապահական խախտում կատարած անձը խախտմանը նախորդող մեկ տարվա ընթացքում ենթարկված է եղել կարգապահական տույժի և նրա նկատմամբ կրկին՝ երկրորդ անգամ, կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

Դիմումով, որպես տարբերակված վերաբերմունքի դրսևորման հիմնավորում, թվարկվել են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց վերաբերյալ կատարված վարչարարության արդյունքում կատարված վարչական ակտերը բողոքարկման արդյունքում բեկանվել են կամ ստուգաթերթերի պատասխաններն աշխատանքային խմբի կողմից ճիշտ չեն ձևավորվել, սակայն պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ ծառայողական քննություն չի նշանակվել: Մասնավորապես, Դիմումով նշվել է հետևյալը. *«Արաբկիր ԱԿ» ՓԲԸ, «Վիոլետա ԲԿ» ՍՊԸ (առկա է քրեական գործ՝ կոռուպցիոն հանցակազմով, «Կանարդ» ՍՊԸ՝ Դավիդյանց պոլիկլինիկաներ - գովազդի սխուգաթերթ, «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն» ՍՊԸ - գովազդի սխուգաթերթ, «Արսանա» ՓԲԸ - արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման սխուգաթերթ՝ ակնաբանական, օպտիկ տեխնիկական բժշկական և օգնության և սպասարկման տեսակների մասով (...)»:*

Հանձնաժողովը Տեսչական մարմնից 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/1552-2025 գրությամբ պահանջել է հայտնել՝ նշված կազմակերպությունների նկատմամբ

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում կայացված վարչական ակտերն արդյո՞ք բեկանվել են վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու արդյունքում կամ արդյո՞ք նշված ստուգումների ընթացքում արձանագրվել են աշխատանքային խմբի կողմից ստուգաթերթի պատասխանները ոչ ճիշտ ձևավորելու դեպքեր: Հարցմանն ի պատասխան՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրությամբ նշվել է, որ նշված կազմակերպություններում իրականացված վարչարարության ընթացքում աշխատանքային խմբի կողմից ստուգաթերթերի պատասխանների ոչ ճիշտ ձևավորելու դեպքեր չեն արձանագրվել, իսկ բեկանվել են միայն «Արաբկիր ԱԿ» ՓԲԸ-ում իրականացված վարչարարության արդյունքում կայացված 2024 թվականի հունիսի 24-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0998 որոշումը, 2024 թվականի օգոստոսի 20-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1279 որոշումը, 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 0192 կարգադրագիրը և 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 0342 կարգադրագիրը:

Բեկանված ակտերի կապակցությամբ ծառայողական քննություն չնշանակելու հետ կապված Տեսչական մարմինը 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությամբ հայտնել է, որ բեկանման հիմք է հանդիսացել վերաբերելի իրավական ակտի իրավակարգավորման տարընթերցումը: Մասնավորապես՝ վարույթի շրջանակներում չի հստակեցվել, թե ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի 53-րդ կետի 1-ին ենթակետի (մինչև 26.08.2024թ. N 271-Ն խմբագրությունը) համաձայն՝ պլանային պատվաստումների դեպքում բժշկի կողմից կատարման ենթակա սուբյեկտիվ և օբյեկտիվ զննման որ գործողություններն են, որ բժշկի կողմից չեն կատարվել: Գրությամբ տեղեկացվել է, որ նշված սուբյեկտիվ և օբյեկտիվ զննությունների գործողությունների տարբերակման վերաբերյալ չնշելն իրենից չի կարող ենթադրել հանրային մեծ վտանգավորություն և առաջացնել հանրորեն վտանգավոր հետևանքներ:

Հանձնաժողովը բավարար է համարում նշված հիմնավորումները՝ հաշվի առնելով, որ վերոգրյալ դեպքում վարչական ակտի բեկանման հիմքը տարբերվում է Ա.Բալասանյանի նկատմամբ թիվ ԱԿ 967-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության փաստական հանգամանքներից: Մասնավորապես, երկրորդ դեպքում ծառայողական քննության արդյունքների մասին եզրակացությամբ արձանագրվել են

նաև պաշտոնատար անձանց գործողությունների հանրորեն վտանգավոր հնարավոր հետևանքները, մասնավորապես նշվել է, որ ոչ պատշաճ ստուգման արդյունքում կարող են լինել այնպիսի բուժաշխատողներ, որոնք հնարավոր է վարակված լինեն վիրուսային հեպատիտ Բ-ով կամ Ց-ով, որի ենթադրյալ առկայության պայմաններում վտանգվում է ՊՈԱԿ-ում գտնվող բուժաշխատողների և պացիենտների առողջությունը: Բացի այդ, Հանձնաժողովը կարևորում է նաև այն հանգամանքը, որ 2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնում իրականացված ծառայողական քննությունների նյութերի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արդեն իսկ արձանագրել է վարչական ակտերի բեկանման և ստուգաթերթերի կազմման հետ կապված խախտումների վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների առկայությունը:

Հանձնաժողովը նպատակահարմար է համարում անդրադառնալ նաև Դիմումով նշված այն հանգամանքին, որ Արևելյան տարածքային կենտրոնը Տեսչական մարմնի ստորաբաժանումների շրջանում առաջամարտիկ է եղել: Դիմումով նշվել է, որ սա հիմնավորվում է Տեսչական մարմնի ամսական հաշվետվությունների ուսումնասիրությամբ: Հանձնաժողովն ուսումնասիրել է Տեսչական մարմնի 2023 և 2024 թվականների տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև Տեսչական մարմնի տրամադրած տվյալները յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից իրականացված վարչարարության վերաբերյալ: Այս առումով Հանձնաժողովն արձանագրում է, որ 2023 թվականին Տեսչական մարմնի Արևելյան տարածքային կենտրոնի կողմից իրականացվել է 1049 վերահսկողական գործառույթ (վարույթի հարուցում, ստուգման, վերստուգման հանձնարարագրեր), որը Տեսչական մարմնի այլ ստորաբաժանումների շրջանում գրանցված ցուցանիշներից երկրորդն է (գերազանցել է միայն Երևան քաղաքի տարածքային կենտրոնը՝ 1111 վերահսկողական գործառույթ): 2024 թվականին Տեսչական մարմնի Արևելյան տարածքային կենտրոնի կողմից իրականացվել է 671 վերահսկողական գործառույթ. նշված քանակական ցուցանիշը Տեսչական մարմնի ստորաբաժանումների շրջանում երկրորդն է (գերազանցում է միայն Երևան քաղաքի տարածքային կենտրոնը՝ 993 գործառույթ, հաջորդում է Արևմտյան տարածքային կենտրոնը՝ 666 գործառույթ):

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Արևելյան տարածքային կենտրոնը 2024 թվականի ընթացքում նշված ցուցանիշով Տեսչական մարմնի ստորաբաժանումների շրջանում գրանցել է լավագույն արդյունքներից մեկը:

Այնուամենայնիվ, նշված ցուցանիշը չի բարելավվել մինչև Ա. Բալասանյանի՝ Արևելյան տարածքային կենտրոնի պետի պաշտոնը ստանձնելը՝ 2023 թվականի ընթացքում արձանագրված ցուցանիշի համեմատ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել, որ Ա.Բալասանյանի նկատմամբ ծառայողական քննությունների նշանակման հետ կապված նույնական հանգամանքներում Տեսչական մարմնի այլ պաշտոնատար անձանց նկատմամբ չեն նշանակվել ծառայողական քննություններ, կամ որ նույնական խախտումների համար, որոնց համար Ա.Բալասանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, այլ պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել կամ կիրառվել են նվազ ծանր կարգապահական տույժի միջոցներ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ վարույթի շրջանակներում չի հիմնավորվել Ա.Բալասանյանի նկատմամբ Տեսչական մարմնի ղեկավար Ս.Սարգսյանի կողմից կողմնակալ, խտրական, ոչ օբյեկտիվ, ոչ անաչառ վերաբերմունքի դրսևորման հանգամանքը, ուստի այս մասով վարքագծի կանոնների խախտումը բացակայում է:

5.2. Ենթադրյալ լիազորությունների շրջանակից դուրս հանձնարարականներ տալու վերաբերյալ

Սույն վարույթի շրջանակներում քննարկման ենթակա մյուս առերևույթ խախտումն առնչվում է Դիմումով ներկայացված հանգամանքներին առ այն, որ Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի հաստիքացուցակով հաստատված է վարորդի հաստիք, սակայն, այն ծառայում է Տեսչական մարմնի ղեկավարին, ինչպես նաև այն հանգամանքին, որ ի տարբերություն Տեսչական մարմնի այլ աշխատակիցների, որոնք ծառայողական ավտոմեքենաներով եկել են աշխատանքի և գնացել են տուն՝ Ա.Բալասանյանի պարագայում Տեսչական մարմնի ղեկավարը նրան արգելել է օգտվել ծառայողական մեքենայից:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Արևելյան տարածքային կենտրոնի վարորդի հաստիքը զբաղեցնող անձի՝ Կենտրոնական ապարատին սպասարկելու

հանգամանքը հաստատվել է վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով: Միաժամանակ, այն հանգամանքները, որ նշված վարորդը «ծառայում է Տեսչական մարմնի ղեկավարին» և որ Տեսչական մարմնի այլ աշխատակիցները և վարորդները ծառայողական մեքենաներով գնացել են աշխատանքի և տուն, հաստատվել են միայն Ա.Բալասանյանի կողմից ներկայացված տեղեկատվությամբ՝ Դիմումով և Հանձնաժողովում ապրիլի 25-ին մուտքագրված գրությամբ:

Այսպես, Դիմումին ի լրումն՝ Հանձնաժողովում 2025 թվականի մարտին 17-ին մուտքագրված գրությամբ Ա.Բալասանյանը հայտնել է, որ վարորդի հաստիքի առկայության դեպքում, Տեսչական մարմնի ղեկավարին ծառայելու պատճառով, Արևելյան տարածքային կենտրոնի ավտոմեքենայի վարորդի պարտականություններն իր անմիջական պարտականությունների հետ համատեղ իրականացրել է Տարածքային կենտրոնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի մասնագետ Նորիկ Սարգսյանը, իսկ մի քանի ամիս նաև գործածվել է տարածքային կենտրոնի տնտեսվար Արթուր Ամիրխանյանի անձնական ավտոմեքենան, ում վճարվել են ծախսված վառելիքի գինը և համապատասխան պարգևավճարը:

Ա.Բալասանյանը նաև հայտնել է, որ տարածքային կենտրոնի Գավառի բաժին իր գործուղումներն իրականացվել են և՛ տարածքային կենտրոնի ավտոմեքենայով, և՛ Տեսչական մարմնի այլ ավտոմեքենայով:

Ինչպես Դիրքորոշմամբ, այնպես էլ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրությամբ այս առնչությամբ նշվել է, որ մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 92-Ա որոշման ընդունումը Տեսչական մարմնին կցված է եղել 19 ծառայողական ավտոմեքենա, որոնք բաշխվել են կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ ըստ անհրաժեշտության: Նշվել է նաև, որ Տեսչական մարմնի հաստիքացուցակով նախատեսված է 8 վարորդի հաստիք, ինչով պայմանավորված՝ հաշվի առնելով, որ վարորդների համար նախատեսված հաստիքները ծառայողական մեքենաների քանակից քիչ են, դրանք կցվել են վարորդական իրավունք ունեցող և բարեխիղճ ու պատասխանատու վարքագիծ դրսևորած աշխատակիցներին, իսկ վարորդներն ըստ անհրաժեշտության վարել են

այն կառուցվածքային ստորաբաժանմանը կցված ծառայողական մեքենաները, որտեղ վարորդական իրավունք ունեցող աշխատակիցներ չեն եղել կամ չէին կարող կցվել:

Արևելյան տարածքային կենտրոնի վարորդի հաստիքը զբաղեցնող Արշավիր Զաքարյանի հետ հեռախոսազրույցի արդյունքում և նրան ծառայողական ավտոմեքենայի կցագրման մասին Տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1426-Ա հրամանի, նրա հետ նույն օրը կնքված՝ տրանսպորտային միջոցի համար լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրի և ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ա.Զաքարյանը Տեսչական մարմնում աշխատանքի անցնելու պահից՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ից, իրականացրել է Տեսչական մարմնի Տեսչական մարմնի գլխամասի կառուցվածքային ստորաբաժանման աշխատողների փոխադրումները և նրան կցագրված է եղել Տեսչական մարմնի գլխամասի կառուցվածքային ստորաբաժանումներին ամրակցված ավտոմեքենան:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ինչպես 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրության ուսումնասիրության, այնպես էլ Տեսչական մարմնի վարորդներ Արայիկ Աստվածատրյանի և Ալեքսան Գրիգորյանի հետ հեռախոսային խոսակցության միջոցով պարզվել է, որ Տեսչական մարմնի վարորդները որոշ դեպքերում, ըստ անհրաժեշտության, իրականացրել են նաև այլ տարածքային կենտրոնների աշխատակիցների սպասարկումը:

«Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով Տեսչական մարմնի ղեկավարը ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար: Նույն հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Տեսչական մարմնի ղեկավարն իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրագրեր և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, իսկ 8-րդ կետի համաձայն՝ իրականացնում է վերահսկողություն տեսչական մարմնին ամրացված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 16-րդ կետով սահմանվել է պետական մարմինների

ղեկավարների և գլխավոր քարտուղարների իրավասությունը՝ ծառայողական ավտոմեքենաներն ամրացնելու պետական մարմնի պաշտոնատար անձանց:

Տեսչական մարմնի կանոնադրության 32-րդ կետի համաձայն՝ Տեսչական մարմինը տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Տեսչական մարմնի ղեկավարը, լիազորված լինելով համակարգելու Տեսչական մարմնի գործունեությունը և պատասխանատու լինելով Տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար, ինչպես նաև իրավասու լինելով Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց ամրակցելու ծառայողական ավտոմեքենաները, իրավասու է Տեսչական մարմնի բնականոն և պատշաճ գործունեությունն ապահովելու նպատակով, ըստ անհրաժեշտության և Տեսչական մարմնի ստորաբաժանումների ծանրաբեռնվածության հաշվառմամբ, ամրակցելու ծառայողական մեքենաները համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին: Նմանապես, Հանձնաժողովը գտնում է, որ Տեսչական մարմնի ղեկավարի նույն լիազորություններից բխում է նրա իրավասությունը՝ հանձնարարելու Տեսչական մարմնի աշխատակիցներին՝ իրականացնել Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ աշխատանքներ: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Արևելյան տարածքային կենտրոնի հաստիքը զբաղեցնող անձին Տեսչական մարմնի գլխամասի կառուցվածքային ստորաբաժանման աշխատողների սպասարկումը կատարելու վերաբերյալ հանձնարարականի ներկայացումը և դրան համապատասխան՝ նրան գլխամասի կառուցվածքային ստորաբաժանման ծառայողական ավտոմեքենաներից մեկի ամրակցումը բխում են Տեսչական մարմնի ղեկավարի՝ Տեսչական մարմնի գործունեությունը համակարգելու իրավասությունից և Տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար պատասխանատվությունից: Ընդ որում, նկատի ունենալով, որ Տեսչական մարմնին ամրակցված ծառայողական ավտոմեքենաների թիվը զգալիորեն գերազանցում է վարորդների հաստիքների թիվը՝ Հանձնաժողովը գտնում է, որ անխուսափելի է այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ ոչ բոլոր ծառայողական ավտոմեքենաներն էին ամրակցվելու վարորդներին, ինչից ելնելով՝ վարորդների

պարտականությունները կարող էին տարածքային ստորաբաժանումների սպասարկման տեսանկյունից ենթադրել որոշակի ճկունություն:

Ինչ վերաբերում է Ա.Բալասանյանին և Տեսչական մարմնի այլ աշխատակիցներին տնից աշխատավայր և աշխատավայրից տուն ծառայողական մեքենաներով փոխադրելուն, ապա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 4-րդ կետի համաձայն՝ պետական ծառայողական մեքենա են համարվում՝

1) պետական մարմնի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձանց սպասարկելու նպատակով նախատեսված ավտոմեքենաները (այսուհետ՝ պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաներ), որոնք հատկացվում են նրանց կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ իրականացնելու համար.

2) պետական մարմինների անձնակազմերի սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաները, որոնք հատկացվում են նրանց կողմից պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ և որոշակի կանոնադրական գործառույթներ իրականացնելու նպատակով:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Տեսչական մարմնին կցված ծառայողական ավտոմեքենաները սպասարկում են տարածքին՝ դրանք համարվում են գործառնական ավտոմեքենաներ, այսինքն՝ նախատեսված են Տեսչական մարմնի օրենսդրությամբ նախատեսված գործառույթների արդյունավետ և օպերատիվ իրականացումն ապահովելու համար:

Այս հանգամանքը հաստատվում է նաև ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի (մինչև 2024 թվականի հոկտեմբերի 10-ի փոփոխությունները գործող խմբագրությամբ) կարգավորումների ուսումնասիրմամբ: Մասնավորապես, նշված հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ մեկական ծառայողական ավտոմեքենաները հատկացվում են հետևյալ պաշտոնատար անձանց՝

1) Հայաստանի Հանրապետության փոխվարչապետներ.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար.

3) Հայաստանի Հանրապետության նախարարներ.

4) Հայաստանի Հանրապետության մարզպետներ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարներ.

6) Հայաստանի Հանրապետության նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարներ.

7) Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար:

Ըստ այդմ, Տեսչական մարմնում՝ որպես Կառավարությանը ենթակա մարմին, կոնկրետ պաշտոնական անձին սպասարկելու նպատակով ծառայողական ավտոմեքենա կարող էր տրամադրվել միայն Տեսչական մարմնի ղեկավարին՝ որպես Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի: Հետևաբար, Տեսչական մարմնին հատկացված մնացած ավտոմեքենաները համարվում են վերոնշյալ հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ պետական մարմինների անձնակազմերի սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաները, որոնք հատկացվում են նրանց կողմից պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ և որոշակի կանոնադրական գործառույթներ իրականացնելու նպատակով:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ բացառությամբ Տեսչական մարմնի ղեկավարի, Տեսչական մարմնի այլ աշխատակիցները, այդ թվում՝ վարորդները և վարորդի պարտականությունն իրականացնող անձինք Տեսչական մարմնին հատկացված ավտոմեքենաները կարող էին գործածել միայն Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ և կանոնադրական գործառույթներ իրականացնելու նպատակով: Հանձնաժողովն ընդգծում է, որ աշխատակիցների՝ տնից աշխատավայր և աշխատավայրից տուն փոխադրումները չեն կարող համարվել պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված փոխադրումներ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ անգամ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից Ա.Բալասանյանին տնից աշխատավայր և աշխատավայրից տուն ծառայողական մեքենայով մեկնելն արգելելու հանգամանքը հաստատվելու դեպքում նշված հանձնարարությունը չէր համարվի օրենքներին հակասող կամ

Տեսչական մարմնի ղեկավարի լիազորություններից դուրս՝ նկատի ունենալով նաև, որ Տեսչական մարմնի ղեկավարն իրավասու է վերահսկողություն իրականացնել Տեսչական մարմնին ամրացված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում շեշտել, որ վարույթի շրջանակներում նաև ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ՝ հաստատված համարելու համար Ս.Սարգսյանի կողմից նման հանձնարարության ներկայացումը:

Այսպես, Տեսչական մարմնի գրությամբ նշվել է, որ Տեսչական մարմնի աշխատողների կողմից ծառայողական ավտոմեքենաները աշխատավայրից տուն և տնից աշխատավայր մեկնելու նպատակով չեն գործածվում, այդ թվում՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից: Օրվա ավարտին ծառայողական ավտոմեքենաները կայանվում են համապատասխան վարչական շենքի տարածքում: Գրության համաձայն՝ Տեսչական մարմնին հատկացված ծառայողական ավտոմեքենաները գործածվում են բացառապես աշխատողների ծառայողական լիազորությունների և դրանց նպատակների իրականացման համար (ստուգումներ, վարչական վարույթներ, սեմինարներ, իրազեկման աշխատանքներ, այլ մարմիններում կայացող հանդիպումներ, քննարկումներ և այլն): Նշված հանգամանքները հաստատվել են նաև Տեսչական մարմնի վարորդների և Արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի պետ-տեսուչի կողմից: Հանձնաժողովի կողմից ձեռք չի բերվել նշված հանգամանքները հերքող ապացույցների բավարար համակցություն: Հանձնաժողովին չի հաջողվել վարույթի շրջանակներում ստանալ Տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնին աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի մասնագետի ցուցմունքը: Մասնավորապես, Հանձնաժողովի հայցմամբ նշված անձի կոնտակտային տվյալները տրամադրվել են Տեսչական մարմնի կողմից, սակայն վերջինիս հետ կապ հաստատել չի հաջողվել:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ս.Սարգսյանի կողմից օրենքին հակասող կամ իր լիազորություններից դուրս հանձնարարականի տրամադրման փաստն ապացուցված չէ, ուստի վարքագծի կանոնների խախտումը բացակայում է:

5.3. Աստղիկ Բալասանյանի՝ 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված գրության կապակցությամբ

Ա.Բալասանյանը 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ կրկնել է Հարուցման որոշման 1.3, 1.4, 1.5, 1.6, 1.7, 1.8, 1.9, 1.10 կետերով նկարագրված փաստական հանգամանքները՝ վիճարկելով Հանձնաժողովի որոշումը՝ նշված դեպքերի առնչությամբ չհարուցելու վարույթ: Հանձնաժողովն արձանագրում է, որ Ա.Բալասանյանի նշված գրությամբ չեն ներկայացվել Դիմումով նկարագրված դեպքերի վերաբերյալ նոր փաստական հանգամանքներ, այլ վիճարկվել են իրավական վերլուծությունը և եզրահանգումները, որոնց հիման վրա Հանձնաժողովը կայացրել է Հարուցման որոշումը և մերժել նշված դեպքերի կապակցությամբ վարույթի հարուցումը:

Գրությամբ Ա.Բալասանյանը պահանջել է գրությունն ընդունել որպես վերադասությամբ ներկայացված բողոք՝ Հանձնաժողովի կողմից վարչական ակտ ընդունելու ընթացքում թույլ տված խախտումները վերացնելու և նոր վարչական ակտ ընդունելու պահանջով կամ Տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալ Աննա Մկրտումյանի վրա նոր կարգապահական վարույթ հարուցելով կամ գրության ընթացքն ապահովել Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված իրավական այլ ընթացակարգով:

Հանձնաժողովն ընդգծում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով չի նախատեսվում Հանձնաժողովի որոշումները վերադասության կարգով բողոքարկելու ընթացակարգ: Ըստ այդմ, դրանք կարող են բողոքարկվել միայն դատական կարգով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հանձնաժողովը նաև իրավասու չէ կրկին քննարկելու նշված գրությամբ ներկայացված փաստերը, քանի որ նույնական փաստական հանգամանքներն արդեն իսկ Հանձնաժողովի կողմից քննարկվել են Հարուցման որոշմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանի կողմից վարքագծի կանոնների խախտման բացակայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Սլավիկ Սարգսյանին և Աստղիկ Բալասանյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ